

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### ԻՐ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՅԻ ԿԻՍՈՒՆ՝ ԿԵԱՆՔԻՆ ՅՐԱԺԵՇՏ ՏՈՒԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Քանի մը օրեր առաջ, ընթացիկ տարուան, 2007-ի Մարտ 25-ին, սրտի տագնապի հետևանքով կեանքին հրաժեշտ տուաւ Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ եւ Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան նախագահ Անդրանիկ Մարգարեան, իր 56 տարեկան հասակին: Իր անժամանակ մահը կը սգան իր ընտանեկան պարագաները, իր գլխաւորած Հայաստանի Հանրապետական Կուսակցութիւնը, Հայաստանի Հանրապետութեան նախարարաց Խորհուրդը, Սրբ. Էջմիածինը եւ հայ ժողովուրդը:

Նոյնը պատահեցաւ դեռեւս 1999-ին: Հանրապետութեան կորովի, երիտասարդ Վարչապետ՝ Վազգէն Սարգիսեանի աղէտաբեր սպանութեամբ երկիրը մատուցեցաւ երկփեղկման վտանգաւոր վիճակի: Երկիրը կը գտնուէր անելի առջեւ: Ղեկավար մը կ'ակնկալուէր հակակշռելու ստեղծուած անկիւնադարձային պայթուցիկ կացութիւնը, եւ երկիրը առաջնորդելու ապահով պայմաններու տակ:

Անդրանիկ Մարգարեան, իր վաղ երիտասարդութեան տարիներէն սկսած, գործնապէս նուիրուած էր հայ ժողովուրդի Ազգային Դատի պաշտպանութեան: Ան միշտ կանգնած էր Հայաստան աշխարհի անկախ պետականութեան գոյաման պահանջատիրութեան կողմին:

Յանուն իր այդ նուիրական գաղափարներուն, իրրեւ կեդրոնախոյս տարր, ան դատապարտուած էր երկու տարուայ բանտարկութեան:

Վերջապէս, ան գտնուած էր Արցախի ինքնապաշտպանութեան պայքարի առաջին գիծերու վրայ:

Մարգարեան իր կեանքով ապացուցած էր իր սկզբունքայնութիւնն ու ղեկավարի արժանիքները:

Անժամանակ կերպով կեանքին հրաժեշտ տուող Վարչապետ Անդրանիկ Մարգարեան, նաեւ ենթակայ դարձաւ ամբաստանութիւններու: Իր վարչապետութեան եօթամեայ շրջանին, ան ծանրաբեռնուեցաւ Հանրապետական Կուսակցութիւնը երկփեղկելու, երկրապահները տարբադարձելու, վերի գերագոյն իշխանութեան կամակատարը ըլլալու մեղադրանքներով:

Անգամ եղան տարաձայնութիւններ, գիւնջ վարչապետութեան

Շաբ.ը էջ 14

## ՅԱՆԿԱՐԾԱՄԱՐ ԵՂԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ



Վարչապետ Անդրանիկ Մարգարեանի դիակը դուրս կը բերուի Օփերայի շէնքէն

Սրտի կաթուածի հետեւանքով յանկարծամահ եղաւ Հայաստանի Վարչապետ Անդրանիկ Մարգարեան:

Առաւօտեան կանուխ վարչապետը իր տան մէջ գտնուելով, բաւականին ծանր անհանգստութիւն ունեցած է, սակայն շտապօգնու-

թեան ահազանգուած է միայն կէսօրուայ մօտ:

Քաղաքային շտապօգնութեան ծառայութեան գլխաւոր բժիշկ Արտեմ Պետրոսեան «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է, որ 12-ը

Շաբ.ը էջ 4

## ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐՈՒՄԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ «120 ՏԱՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ» ԿԱՐԳԱԽՕՍԻՆ ՏԱԿ

Անցեալ շաբաթուայ ընթացքին կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի Վարչութեան ատենապետ Ընդհերուհի Լուսմիլա Սարգսեան տեղեկացուց, որ Մայիս 12-ին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններուն Կուսակցութիւնը կը մասնակցի «120 տարի ժողովուրդի ծառայութեան մէջ» կարգախօսին տակ եւ կ'ակնկալէ յաղթահարել 5 տոկոսի սահմանը:

«Կուսակցութիւնը համակիրները մեծ բանակ ունի, որոնք առաջացել են դեռեւս 1948 թուականի ներգաղթի արդիւնքում: Աւանդական կուսակցութիւնները ազգային արժէքներ են, որոնք արդէն երեք դար է, ինչ պահում են իրենց կենսունակութիւնը: Չնայած մեր օրերում մարդիկ աւելի շատ առաջնորդում են նիւթական, քան թէ գաղափարախօսական արժէքներով, այնուամենայնիւ, մեր ժողովուրդը իմաստուն է եւ կարող է 120-ամեայ կուսակցութիւնը տարբերել արհեստածին քաղաքական ուժերից», - յայտարարեց Լուսմիլա Սարգսեան: Ան նաեւ յայտնեց, որ նախընտրական շրջանին Կուսակցութիւնը շատ բան ունի ներկայացնելիք, որոնց շարքին իր անցեալը եւ արժանապատիւ ներկան:



ՄԴՀԿ Հայաստանի Վարչութեան ատենապետ Լուսմիլա Սարգսեան

Ընդդիմութեան չմիաւորուելու Լուսմիլա Սարգսեան նկատեց մեծ հարուած, որու պատճառով կորսուեցաւ մեծ թիւով ժողովուրդ համախմբելու առիթը: «Քսանութ քաղաքական ուժերից շատ դժուար է ընտրութիւն կատարելը, սեւը սպիտակից տարբերելը, քարոզարշաւ անցկացնելը ու հանդիպումներուն ցանկալի թիւով մարդ հաւաքելը: Հետեւաբար՝ դաշինք չձեւաւորելը նախեալապէս նուազեցրեց ընդդիմադիր ուժերի հնարաւորութիւնները», - աւելցուց Հնչակեան Կուսակցութեան ատենապետ Լուսմիլա Սարգսեան:

## Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ Անդրանիկ Մարգարեանի մահուան կապակցութեամբ, Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը յղեց հետեւեալ ցաւակցական գիրը Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան Խորհուրդին:

Խոր վիշտով տեղեկացանք Հայաստանի Հանրապետութեան վարչապետ, Հանրապետական Կուսակցութեան նախագահ Անդրանիկ Մարգարեանի անժամանակ մահը: Հայաստանի ժողովուրդին հետ, անոր կորուստը կը սգայ նաեւ ամբողջ սփիւռքը:

Մեծ է Անդրանիկ Մարգարեանի ներդրումը անկախ Հայաստանի կերտման ու պետականութեան կառուցման գործին մէջ: Ըլլալով հանդերձ Հայաստանի ամենէն երկար պաշտօնավարող վարչապետը, ան միշտ ալ մնաց ժողովուրդի հետ անմիջական յարաբերութեան մէջ, արժանանալով բոլոր խաւերու սիրոյ եւ յարգանքին:

Այս մեծ կորուստին առթիւ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութիւնը սփիւռքի ու Հայաստանի իր բոլոր կառույցներուն անունով կու գայ յայտնելու՝ զգացուած ցաւակցութիւնները հանգուցեալ վարչապետի ընտանիքի անդամներուն եւ ողջ Հանրապետական Կուսակցութեան:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն

## ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԵՐԺԷ ՄԱՍՆԱԿՑԻԼ ԱՂԹԱՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԻՆ

Մարտ 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը պաշտօնական յայտարարութեամբ մը եկաւ տեղեկացնելու որ, Թուրքիոյ մէջ տեղի ունենալիք՝ Աղթամարի Ս.Սոչ եկեղեցւոյ վերաբացման հանդիսութեան Մայր Աթոռի պատուիրականութիւն պիտի չմասնակցի:

Այս որոշումը առնուած է նկատի ունենալով, որ Թրքական իշխանութիւններու կողմէ վերանորոգուած Ս.Սոչ եկեղեցին պիտի վերածուի թանգարանի եւ պիտի չշարունակէ գործել որպէս եկեղեցի՝ Պոլսոյ Հայոց պատրիարքութեան հոգեւոր իշխանութեան ներքեւ, եւ բացման արարողութիւնը պիտի կատարուի գոտ աշխարհիկ արարողակարգով եւ ոչ Հայաստան:

Շաբ.ը էջ 4

**ԸՆԿՆԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**ԷԼԻ ՄԵԿ ԶՈՇ**

Կիրակի օրը՝ Մարտի 25-ին, իր տանը յանկարծամահ է եղել ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը: Մահուան պաշտօնական պատճառը սրտի անբավարարությունն է: Պէտք է անկեղծ խոստովանեմ, որ վարչապետի մահուանը իմ առաջին ուշադրության հետեւեալն էր. «Նրան էլ վարի տուրն», եւ համոզուած եմ՝ լուրին այսպէս են արձագանքել Հայաստանի հազարաւոր քաղաքացիներ: Իհարկէ, չի կարելի պնդել, որ վարչապետին սպանել են, բայց Հայաստանում ձեւաւորուած միջուկը այնպիսին է, որ հասարակական-քաղաքական ամէն գործչի մահուան ետեւում մարդիկ փորձում են գտնել իշխանութեան հետքը: Եւ սա բնական է, որովհետեւ յայտնի ժամանակները ի վեր մարդիկ սկսել են մահանալ, սպանուել, անգամ ինքնասպան լինել Ռոբերտ Քոչարեանին, Սերժ Սարգսեանին կամ նրանց կլանին չափազանց ձեռնտու, գուցէ անհրաժեշտ ժամանակացույցով: Եւ ինչքան կեանքից հեռանում են ներքաղաքական կեանքում կարեւոր դերակատարում ունեցող անձինք, այնքան աւելի է ընդգծւում «միակ տղամարդու»՝ Ռոբերտ Քոչարեանի կարգավիճակը:

Օրինակ՝ Նաիրի Յուսէպեանի ուղեւորութիւնը բռնեց հենց այն պահին, երբ դա օդ ու ջրի նման հարկաւոր էր Քոչարեանին, Արծրուն Մարգարեանը երկու կրակո-

սանք, թոյն է յայտնաբերուել, այդ մասին կը յայտարարուի: Ի դէպ, մեր հայրենի հեռուստաընկերութիւնները կիրակի օրը ինչ տարան դէպի մանկութիւն: Ես չիշեցի Լեոնիդ Իլյիչ Բրեժնեւի մահը: Այդ ժամանակ էլ խորհրդային կենտրոնական հեռուստաընկերութիւնը ժամանակ առ ժամանակ հաղորդում էր, որ Բրեժնեւը մահացել է, եւ ողջ օրը սիմֆոնիկ երաժշտութիւն էր հնչում: Հարց կը տաք. իսկ ի՞նչ պէտք է լինէր եթէրո՞ւմ: Պէտք է լինէին հարցազրոյցներ, մեկնաբանութիւններ՝ բժիշկների, դատաբժշկական փորձագէտների, քաղաքական գործիչների հետ: Պէտք է վերլուծուէր, թէ ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ իշխող կուսակցութեան ղեկավարի մահը ներքաղաքական զարգացումների վրայ եւ այլն, եւ այսպէս շարունակ:

Հեռուստատեսութիւնը պետք է բաւարարի մարդկանց հետաքրքրութիւնները, փարատի նրանց կասկածներն ու տագնապները, այնինչ սիմֆոնիկ երաժշտութիւնը մեր գիտակցութեան մէջ արթնացնում էր այն զգացողութիւնը, թէ էլի մեզնից ինչ-որ բան են թաքցնում: Ինչ վերաբերում է վարչապետ Անդրանիկ Մարգարեանին, անշուշտ, այս տարիների ընթացքում նա մի տեսակ կամուրջի դեր է կատարել իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ:

**Մարդիկ սկսել են մահանալ, սպանուել, անգամ ինքնասպան լինել Ռոբերտ Քոչարեանին, Սերժ Սարգսեանին կամ նրանց կլանին չափազանց ձեռնտու, գուցէ անհրաժեշտ ժամանակացույցով: Եւ ինչքան կեանքից հեռանում են ներքաղաքական կեանքում կարեւոր դերակատարում ունեցող անձինք, այնքան աւելի է ընդգծւում «միակ տղամարդու»՝ Ռոբերտ Քոչարեանի կարգավիճակը**

ցով ինքնասպան եղաւ, երբ դա շատ անհրաժեշտ էր Քոչարեանին, ՀԿԿ առաջնորդ Սերգէյ Բաղալեանը յանկարծամահ եղաւ, երբ դա շատ անհրաժեշտ էր Քոչարեանին, էդուարդ Եգորեանը յանկարծամահ եղաւ, երբ դա շատ անհրաժեշտ էր Քոչարեանին: Այս ցանկը, իհարկէ, կարելի է երկար շարունակել, բայց թուրքական էլ բաւարար է՝ հասկանալու համար բոլոր նրանց, ովքեր Մարգարեանի մահուանը չեն վերաբերում միայն որպէս սովորական ինֆարկտի: Ինչ խօսք, վարչապետը, ի տարբերութիւն Քոչարեանի, տուճիկի վրայ չէր պտտուում եւ առանձնապէս ուշադիր չէր սեփական առողջութեան նկատմամբ: Պէտք է խոստովանել, որ նա իսկապէս խախտ առողջութիւն ունէր: Բայց ինչքան մարդը խախտ առողջութիւն ունի, այնքան հեշտ է նրան «բնական մահուան» հասցնել: Ու եթէ առողջ մարդուն ինֆարկտի հասցնելու համար հարկաւոր կը լինէր ԿԳԲ-ական յայտնի հաբերի մէկ ամբողջական հաբ, վատառողջ մարդուն կէս հաբն էլ բաւարար էր:

Բայց կրկնում եմ, այս մտքերը մեր գլխում ծագում են առաջին հերթին Հայաստանում ստեղծուած միջուկը պատճառով. բոլորը գիտեն, որ իշխանութեան համար իսկապէս, վերացնելը խաղի կանոնների անբաժանելի մաս է կազմում: Քչերն են հաւատում, որ եթէ հիմա վարչապետի օրգանիզմի մէջ,

Աւելի ճիշդ կը լինի ասել, որ նրա լինելը վարչապետի պաշտօնում մի տեսակ կոտորում էր մարդկանց մէջ նստած այն գիտակցութիւնը, թէ ողջ իշխանութիւնը պատկանում է դարաբաղեան կլանին, եւ սա ձեռնտու էր նաեւ իշխանութեանը:

Բայց հիմա, խորհրդարանական ընտրութիւնների նախաշեմին Մարգարեանը մի տեսակ աւելորդ էր դառնում գոնէ այն իմաստով, որ պաշտօնները քիչ են, իսկ յաւակնորդները՝ շատ: Իսկ ընդհանուր առմամբ Մարգարեանը պատկանում էր այն մարդկանց թուին, ովքեր իշխանութեան մէջ տեղաւորուած լինելով՝ ներքուստ բոլորովին այլ բան էին մտածում տեղի ունեցող պրոցեսների մասին, եւ որոշակի պայմանների դէպքում այդ մտածումները կարող էին դուրս յորդել, ինչը մի քանի անգամ տեղի է ունեցել վարչապետի հարցազրոյցներում:

Հարկ է նաեւ նշել, որ Անդրանիկ Մարգարեանը որպէս անձ բաւական համակրելի կերպար էր եւ իշխանական էլիտայից առանձնանում էր նենգութեան բացակայութեամբ: Եւ անկախ նրա քաղաքական գործունէութեան նկատմամբ առկայ գնահատականներից, պետք է արձանագրել, որ Անդրանիկ Մարգարեանի մահը իսկապէս ցաւալի իրադարձութիւն է:

Ա.Կ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

**ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՐԲԱՅՐՆԵՐԻ ԿՈՒԻՆ**

Մեր տեղեկութիւններով, իշխանութիւններն ամէն ինչ անում են՝ Սամուէլ Բաբեանին որպէս պատգամաւորութեան թեկնածու չգրանցելու համար: Թէ կոնկրետ ինչ պատճառաբանութիւններ կը բերեն՝ առայժմ դժուար է ասել, բայց ամենայն հաւանականութեամբ, «առանցքը» կը լինի վերջին հինգ տարիներին Հայաստանում մշտապէս բնակուել-չբնակուելու հարցը:

Հասկանալի է, որ իշխանութիւններին (խօսքն առաջին հերթին Սերժ Սարգսեանի մասին է) մտահոգում է ոչ թէ «Դաշինք» կուսակցութեան, այլ անձամբ Սամուէլ Բաբեանի մասնակցութիւնը առաջիկայ ընտրութիւններին: Եւ հենց սա է պատճառը, որ Սամուէլ Բաբեանի գլխին ամպեր են կու-

Պետութեան կառավարման այս «մոդելը» տարածուած էր բոլոր արեւելեան խանութիւններում ու սուլթանութիւններում: Յանկացած արեւելեան խան (թուրք, պարսիկ եւ այլն) անպայման իր եղբայրներին պետական պաշտօնների էր նշանակում:

տակում (բանն այնտեղ է հասել, որ մի քանի օր շարունակ կուսակցութեան գրասենակը փակ էր, իսկ Սամուէլ Բաբեանին ու նրա մերձակորդներից որեւէ մէկին գտնելն անհնար էր):

Անկեղծ ասած, նախընտրական այս շրջանում իշխանութիւններից ինչ անբարոյականութիւն ասես կարելի է սպասել, բայց Սամուէլ Բաբեանին չգրանցելը, համաձայնութեամբ, կը գերազանցի անբարոյականութեան բոլոր սահմանները: Խնդիրն ամենեւին էլ նրա քաղաքական համոզմունքները չեն՝ դրանց կարելի է համաձայնուել կամ համաձայնուել: Խնդիրն այն է, որ Ղարաբաղի գինուած ուժերի նախկին հրամանատարին ու պաշտպանութեան նախկին նախարարին արգելում են Հայաստանի ընտրութիւններին մասնակցել: Ընդ որում, դա արգելում է այն նոյն Քոչարեանի օրօք, որն ի սկզբանէ իրաւունք չուներ առաջադրուել ՀՀ նախագահի պաշտօնում, բայց ժէԿԻ կեղծ տեղեկանք ներկայացրեց ու դարձաւ Հայաստանի նախագահ:

Իսկ ամենացաւալին այն է, որ այս ամէնի կազմակերպիչը՝ Սերժ Սարգսեանը, այդ ամէնն անում է, որպէսզի Սաշիկ անուսով իր եղբայրն առանց որեւէ պրոբլեմի դառնայ պատգամաւոր: Փաստօրէն Սիւնիքում պիտի մրցեն ԼՂՀ պաշտպանութեան նախկին նախարարը եւ մի մարդ, ում միակ արժանիքը (եթէ դա ընդհանրապէս կարելի է արժանիք համարել) այն է, որ նա Սերժ Սարգսեանի եղբայրն է: Նորից ենք կրկնում՝ խնդիրը ոչ թէ քաղաքական հայեացքներն են, այլ այդ մարդկանց անձնական որակները: Սամուէլ Բաբեանը պատերազմի արդիւնքում սովորական զինուորից դարձել է գեներալ եւ նախարար: Լաւ է դա թէ վատ՝ այլ հարց է, բայց նա այդ ամէնին հասել է բացառապէս իր անձնական որակների շնորհիւ: Սաշիկ Սարգսեանը նոյնպէս իր այսօրուայ դիրքի համար պարտական է դարբանաբան շարժմանը, բայց՝ այն իմաստով, որ այդ շարժման արդիւնքում եղբայրը բարձր դիրքի է հասել: Զիններ այդ շարժումը՝ Սաշիկն

ինչ-որ տեղ «բարտառոյ սամասուալ» էր քշելու, բայց խնդիրը միայն շարժումը չէ: Եթէ նոյնիսկ շարժումը լինէր, բայց Սերժին, Աստուած մի արասցէ, մի պատահական գնդակ դիպչէր, ինքն էլի «բարտառոյ սամասուալ» էր քշելու: Եւ եթէ հիմա դրա փոխարէն պատգամաւոր է ու կալիֆորնիայում մի լիոնաւոր տոլարներ է ներդնում, պատճառները գուտ «գենետիկական» են:

Ի դէպ, պետութեան կառավարման այս «մոդելը» տարածուած էր բոլոր արեւելեան խանութիւններում ու սուլթանութիւններում: Յանկացած արեւելեան խան (թուրք, պարսիկ եւ այլն) անպայման իր եղբայրներին պետական պաշտօնների էր նշանակում: Եւ ընդհանրապէս, որքան յետամնաց է ժողովուրդը, այնքան մեծ կարեւորութիւն է տալիս ազգակցական կապերին եւ առաջնորդում ոչ թէ անձնական որակներով, այլ արիւնակցական կապերով: Այսինքն, Սերժ Սարգսեանն այս դէպքում վարում է որպէս պրիմիտիւ արեւելեան դուքանչի, որը պատահաբար հասել է իշխանութեան եւ հիմա ազգուսակին «տեղաւորում է» այստեղ-այնտեղ:

Բայց պրոբլեմն այն է, որ ժամանակին Սամուէլ Բաբեանն էլ է ճիշդ նոյն կերպ վարուել: Երբ նա Ղարաբաղի փաստացի տիրակալն էր, նրա եղբայրը (որի միակ արժանիքը Սամուէլ Բաբեանի եղբայրը լինելն էր) նշանակուել էր ԼՂՀ ներքին գործերի նախարար:

Այնպէս որ, ըստ էութեան նոյն մտածողութեան տէր մարդիկ այսօր Հայաստանում իրար դէմ են ելել եւ պայքարում են Հայաստանը «փրկելու» իրաւունքի համար, մինչդեռ Հայաստանի խնդիրն այս մտածողութիւնից ձեռքազատուելն է:

**ՀՐԱՅՐ ԱՒԵՏԻՍԵԱՆ «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»**

**ՄԱՍԻՍ** ՇՄԲԱԹԱԹԵՐԹ  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆԵԱՆ  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
 ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ  
 Ղեռ. (626) 797-7680  
 Ֆաքս. (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party of  
 Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$50.00, Canada \$60 (Second  
 Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail),  
 \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

«ԿԱՆԱԶ ԼՈՅՍ» ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: ՀՀ վարչապետ, ՀՀ նախագահ Անդրանիկ Մարգարեանի մասը ցնցել է նաև հասարակութեանը: Մարդիկ խորը ցաւով են արտայայտուում նրա մասին: Այդուհանդերձ, «Ա1+»-ի կողմից հարցուած քաղաքացիները ոչ միայն նրա մարդկային կորուստն են գիտակցում, այլ նաև քաղաքական դաշտի կորուստը:



Նախարար Սերժ Սարգսեան

Վարչապետի մահն ինչպէ՞ս կարող է անդրադառնալ Հայաստանի քաղաքական դաշտի վրայ: «Շատ բացասաբար: Նրա մահը մեծ կորուստ է եւ վաղաժամ է որեւէ բան ասելը, բայց բոլոր դէպքերում ակնյայտ է, որ դա կանաչ լույս է Սերժ Սարգսեանի համար:

Չեմ կարծում, որ ՀՀ-ում կը գտնուի աւելի ուժեղ մէկը, որը կը կարողանայ նման քաղաքականութիւն վարել, ոնց որ Անդրանիկ Մարգարեանը: Այսինքն, ամբողջ ՀՀ կը նուիրուի Սերժ Սարգսեանին եւ դա, բնականաբար, իր հետեւանքները կ'ունենայ ընտրութիւնների ընթացքում եւ այս առումով ամենամեծ կորուստը կը կրի «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը: Այսինքն՝ ընտրութիւններից առաջ այն, ինչ մտածում էր, 100 տոկոսով չի իրականանայ», - կարծում է 45 ամեայ Օֆելիա Մովսիսեանը:

39 ամեայ էմման էլ համոզուած է. «Դէպի վատը կը գնայ: Նա աշխատում էր ժողովրդի օգտին, չեմ կարծում՝ ինչ որ մէկը նրա արածը անի»: Իրաւագէտ 34 ամեայ Կարէնի պնդմամբ, լուրջ քա-

ղաքական գործչի պակաս կը լինի. «Նա ոչ թէ փողերի հիման վրայ քաղաքական դաշտում ինչ որ բան էր անում, այլ ինքն իրենով ներկայացնում էր որոշակի ուժ: Զսպուածութիւնը էլ չի լինի: Նա, վազգէն Մանուկեանը, Լեւոն Տէր Պետրոսեանը այն ուժերն են, որ իրենց անձն է սաստում, ոչ թէ փողը»:

Հարցման ժամանակ շատ քիչ մարդիկ պատասխանեցին, թէ ոչ մի փոփոխութիւն էլ չի լինի: «Ամէն ինչ նոյնը կը մնայ: Ով էլ գա, ես միեւնոյն է ելի արեւածաղիկ եմ վաճառելու ու օրական 1000 դրամից աւել չեմ տեսնելու», - ասաց Երեւանի կենտրոնում արեւածաղիկ վաճառելով ապրուստի միջոց վաստակող տարեց կինը:

Ի դէպ, շատերը, երբ լսում էին հարցը, խուսափում էին պատասխանել: Առանձնապատուկ զգուշաւորութեամբ յատկապէս աչքի էին ընկնում տղամարդիկ:

ԱՆՅԵԱԼԸ ԼԱԿՏԵՍՈՒԹԻՒՆ ՉԻ ՆԵՐՇՆՉՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ոչ մի գրքոյկ, ոչ մի ձեռնարկ կամ փաստաթուղթ չի կարող փոխարինել մայիսի 12-ին այն ընտրողին, որը գալով ընտրատեղամաս իր ձայնը պէտք է տա այս կամ այն քաղաքական ուժին կամ գործչին: Ոչ մի գրքոյկ չի կարող փոխարինել քաղաքական կամքին: Այսօր ՀՀ-ում ամենամեծ խնդիրն այն է, որ բնակչութիւնը չի մասնակցում ընտրութիւններին», - «Ա1+»-ին յայտնեց Երեւանում ԵԱՀԿ գրասենեակի ղեկավար Վլադիմիր Պրեախինը:



ԵԱՀԿ գրասենեակի ղեկավար Վլադիմիր Պրեախին

կերպութիւնների, ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ: Ես կարող եմ ասել, որ ՀՀ-ում չկայ քաղաքական ուժ, որը հետաքրքրուած չլինի ընտրութիւններն ազատ եւ արդար անցկացնելու խնդրով»:

Արդէն 3 ու կէս տարի է, ինչ պարոն Պրեախինը ՀՀ-ում է, սակայն նա դժուարանում է կանխատեսումներ անել առաջիկայ ընտրութիւնների վերաբերեալ: Նախորդ ընտրութիւններն ու դրանց վերաբերեալ տեսակէտները նրան լաւատեսութիւն չեն ներշնչում:

«Իմ պատճառով ընտրութեան ընթացքում ներկայ եմ եղել Սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէին: Ցաւօք, որքան ես տեղեակ եմ մամուլից եւ տարբեր յայտարարութիւններից բազմաթիւ նկատողութիւններ եւ դիտողութիւններ են եղել: Ես չուսով եմ, որ խորհրդարանի ընտրութիւններում դրանց թիւը կը պակասի», - ասաց Վլադիմիր Պրեախինը:

ՍԱՍՈՒԷԼ ԲԱԲԱԵԱՆԸ ՀԱՆԵԼ Է ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Սիւնիքի թիւ 37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով «Դաշինք» կուսակցութեան նախագահ Սամուէլ Բաբայեանը չի մասնակցի մայիսի 12-ի խորհրդարանի ընտրութիւններին:

«Հայաստանում ընտրական պայքարը փոխարինուել է միջանձնական յարաբերութիւնների ճշգրտման. չկայ գաղափարական պայքար՝ պետական ապարատը օգտագործելով իր վարչական, ֆինանսական ուսուրանքը, ճնշումների իր ողջ կարողութիւնը՝ իր ամենալայնուակ դրսեւորումներով արտայայտուում է ողջ հանրապետութիւնում, ինչպէս նաև Սիւնիքի թիւ 37 ընտրատարածքներում: Դրա վառ ապացոյց է ԱԺՄ առաջնորդ Վազգէն Մանուկեանի նկատմամբ իրականացուած անօրինականութիւնները», - Սամուէլ Բաբայեանի ինքնաբացարկն այսպէս բացատրեց «Դաշինք» կուսակցութեան քաղ-

խորհրդի անդամ Գնեւ Դլեշեանը: Պարոն Բաբայեանի հրաժարականի պատճառը Վազգէն Մանուկեանի նկատմամբ իրականացուող սպառնալիքներն էին, թէ՞ նրան էլ են իշխանութիւնները սպառնացել՝ «Ա1+»-ի հարցին՝ պարոն Դլեշեանը պատասխանեց. «Ոչ, Սամուէլ Բաբայեանի նկատմամբ ճնշումներ եւ սպառնալիքներ չեն եղել, սակայն ընդդիմադիր կեցուածքով յորջորջող որոշ քաղաքական գործիչներ, որոնք ընտրական յանձնաժողովներում ունեն անդամ ունենալու իրաւունք եւ նախապէս մեզ խոստացել էին համագործակցել՝ իրենց խօսքը գործի չեն վերածում: Մեր ունեցած տեղեկութիւններով, նրանք լաւ համագործակցում են իշխանութիւններին հետ՝ վաճառել են իրենց տեղերը»:

«Դաշինք» կուսակցութիւնը իր ռեսուրսները պատրաստուած է ուղղել համամասնական ընտրապայքարին:

ԱԶԱՏԱԳՐՈՒԿԸ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵԱՆՔ ԵՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ժրնեւեան բանակցութիւններում քննարկուած Լեւոնային Ղարաբաղի յարակից տարածքներից հայկական գործերի դուրսբերման եւ մինչեւ կարգավիճակի հանրաքուէն Ղարաբաղին «միջանկեալ» կարգավիճակ տրամադրելու հարցերը զայլույթ են առաջացրել Արցախի բնակչութեան մի մասի մօտ, որոնք մեծամասամբ այդ մասին տեղեկացել են KarabakhOpen-ի թղթակցից:

«Ի՞նչ է՝ նրանք մեզ ապուշի տեղ են դնում, - գայրանում է Ստեփանակերտի բնակչուհի Նարինէ Ստեփանեանը: - Ինչպէս կարող է ժողովուրդը տարածքների վերադարձին համաձայնել: Ո՞վ կարող էր մտածել գործերի դուրսբերման մասին: Ո՞վ կարող է մեր անվտանգութեան երաշխաւորը լինել: Ո՞վ է մեր զլայկովներին իրաւունք տուել անօրինակ մեր ճակատագիրը: Մենք դրա համար չենք կուռել, որ այսօր նորից թակարդը ընկնենք»:

Ըստ նրա, ԵԱՀԿ Մինսկի խումբը եւ նման կազմակերպութիւնները պէտք է հաշուի առնեն ժողովրդի համար այդ տարածքների նշանակութիւնը. «Ղարաբաղիցիների համար դրանք կեանք եւ անվտանգութիւն են»:

«Կարգավիճակ: Ի՞նչ կարգա-

վիճակ: Մենք վաղուց ենք մեր կարգավիճակը որոշել: Եւ այն այսպէս է՝ հնչում՝ մենք արդէն պետութիւն ենք ստեղծել, ապրելու ենք անկախ, եւ մեր անվտանգութիւնը կը պաշտպանեն մեր գործերը, - մեկնաբանում է Աշոտ Սարգսեանը: - Յաղթողներին չեն դատում: Եւ մենք պարտաւոր չենք համաձայնուել մեր հարեւանների պահանջներին, քանի որ նրանք մեզ համար դեռ ընդունելի չեն»:

«Ինչ համար զարմանալի չեն նման որոշումները: Ես նոյնիսկ չեմ էլ զարմանայ, եթէ մեր իշխանութիւնները վաղը ստորագրելն այդ համաձայնագիրը, - նշում է Սերգէյ Դանիլեյան: - Դեռ հնում ասել են՝ խաղաղութիւն ես ուզում՝ պատրաստուելի պատերազմի: Իսկ այսօր Ղարաբաղում հետաքրքիր իրավիճակ է»:

Հանրապետութիւնում անորոշութիւն է, իսկ մեր «պատասխանատու» անձինք իրար միջեւ են պայքարում՝ ումն է աւելի շատ եւ թանկ արտասահմանեան մեքենան եւ պալատները: Ելնելով այդ պահուածքներից, կարելի է նկատել, որ նրանք էլ են խաղաղութիւն ուզում, սակայն, ո՞վ պէտք է պատրաստուելի պատերազմին՝ մնում է միայն ենթադրել»:

4172 ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԱՊԱՍԱՆ Է ԽՆԴՐԵԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Անցած տարի աշխարհի 36 զարգացած երկրներում ապաստան է խնդրել 4172 հայաստանցի: Այդ մասին ասուած է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագոյն յանձնակատարի այսօր հրապարակուած զեկոյցում:

Փաստաթուղթն արձանագրում է, որ ապաստան հայցող հայաստանցիների թիւը նախորդ տարուայ համեմատ նուազել է 16 տոկոսով:

Եւրոպական երկրներից հայաստանցիների դիմումների թուով առաջին տեղում է Ֆրանսիան՝ 1547 դիմորդ: Անցած տարի Բելգիային է դիմել 381, Աւստրիային՝ 350, Գերմանիային՝ 278 հայաստանցի:

Միւլենոյն ժամանակ, անցած տարի ապաստան տրամադրելու խնդրանքով Հայաստանի իշխանութիւններին է դիմել տարբեր երկրների 620 քաղաքացի: 2005 թուականին այդ թիւն ընդամէնը 160 էր:

Աշխարհի զարգացած երկրներում ապաստան հայցողների ցուցակը գլխաւորում են իրաքցիները՝ 2006 թուականին Եւրոպայի, Հիւսիսային Ամերիկայի եւ այլ երկրների իշխանութիւններին է դիմել 22 հազար իրաքցի:

Հայաստանցիները ապաստան հայցողների թուով աշխարհում 18-րդն են:

2006 թուականին աշխարհի տարբեր երկրներում ապաստան հայցողների ընդհանուր թիւը կազմել է մօտ 300 հազար: Հաղորդում է «Ազատութիւն» ռադիոկայանը:

ԼՈՒՐԵՐ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ՝ ԿԱՐԶԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

Անդրանիկ Նահապետի Մարգարեան

ՀՀ վարչապետ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան նախագահ

Ծնունդ է 1951 թ. Յունիսի 12-ին Երեւանում:

1972 թ. աւարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի ֆակուլտետը, ստանալով հաշուիչ մեքենաների ինժեների որակաւորում:

1972-74 թթ. աշխատել է Գազի արդիւնաբերութեան համամիութենական Գիտահետազոտական ինստիտուտի Երեւանի մասնաճիւղում գիտաշխատող, աւագ ինժեներ:

1977-78 թթ. աշխատել է Հայաստանի էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտում գլխավոր ինժեներ:

1978-79 թթ. աշխատել է էլեկտրատեխնիկական գործարանում էլեկտրոնային հաշուիչ մեքենաների բաժնի պետ:

1979-90 թթ. աշխատել է Առեւտրի նախարարութեան հանրապետական ինֆորմացիոն հաշուողական կենտրոնում էլեկտրոնիկայի բաժնի վարիչ:

1990-94 թթ. աշխատել է յատուկ ծրագրերի պետական վարչութիւնում ինֆորմացիայի բաժնի ղեկավար:

1994-95 թթ. աշխատել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում կրտսեր գիտաշխատող:

1995 թ. ընտրուել է ԱԺ առաջին գումարման պատգամաւոր:

1999 թ. ընտրուել է ԱԺ պատգամաւոր, ղեկավարել «Միասնութիւն» խմբակցութիւնը:

2000 թ. նշանակուել է ՀՀ վարչապետ, Հայաստանի Հանրապետական կուսակցութեան հետ ստանձնելով կառավարութեան գործունէութեան համար պատասխանատուութիւնը:

Ա. Մարգարեանը որպէս ՀՀ վարչապետ շարունակում է պաշտօնավարել նաեւ 2003 թ. ՀՀ ԱԺ ընտրութիւններից յետոյ, ղեկավարելով ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորուած կոալիցիոն կառավարութիւնը:



Անդրանիկ Մարգարեանը իր քաղաքական գործունէութեան ուղենիշ ընտրելով Նժդէհի գաղափարները, 1966 թ.-ից հանդէս է եկել խորհրդային տոտալիտար համակարգի քննադատութեամբ, Հայ դատի պաշտպանութեան դիրքերից եւ հաշի ժողովրդի ապագան տեսել ժողովրդավարական, անկախ պետութեան առկայութեան պայմաններում: 1968 թ.-ից եղել է խորհրդային տարիներին անլեկալ գործող Ազգային Միացեալ կուսակցութեան անդամ, 1973 թ.-ից, ԱՄԿ խորհրդի անդամ: Իր գաղափարների տարածման եւ ծաւալած գործունէութեան համար 1974 թ. ձերբակալուել է եւ դատապարտուել երկու տարուայ ազատազրկման: Ղարաբաղեան պատերազմի տարիներին գործուն մասնակցութիւն է ունեցել կամաւորական ջոկատների ստեղծման, Արցախի գէնք, զինամթերք եւ սննդամթերք առաքման աշխատանքներին, մասնակցել է մարտական գործողութիւններին: 1998 թ.-ից Երկրապահ Կամաւորականների Միութեան (ԵԿՄ) անդամ է, այնուհետեւ, ԵԿՄ վարչութեան անդամ: 1992 թ. Յունիսի 9-ից Հայաստանի Հանրապետութիւնում առաջին գրանցուած եւ Ազգային Միացեալ կուսակցութեան գաղափարական ժառանգորդ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) անդամ է: Ամուսնացած է, ունի երկու դուստր, մէկ որդի եւ հինգ թոռնիկ:

ԹՈՒՐԲԻԱՆ ՊԱՏՐԱՍ ԶԷ ՈՐԵՒԷ ԿԱՐԳԻ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ,- ԳՏՆՈՒՄ Է ՀԱՅ ՊԱՏՄԱԲԱՆԸ

ԵՐԵՒԱՆ, 26 ՄԱՐՏԻ, ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆ: Հայ-թուրքական սահմանի բացման եւ հայ-թուրքական յարաբերութիւնների հաստատման հարցում Հայաստանը որպէս նախապայման չի առաջադրում Թուրքիայի կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման պահանջը: Ինչպէս «ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆ»-ի թղթակցի հետ զրոյցում նշեց Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն, պատմաբան Հայկ Դեմոնեանը, Հայաստանի սկզբունքային դիրքորոշումը մինազամայն ճիշդ է: «Մենք գիտակցում ենք, որ վաղ թէ ուշ դատելի է ունենալու: Այլապէս մենք չենք կարող ապրել մի հարեւանի հետ, որը հանդիսանալով պետական մակարդակով հայերի ցեղասպանութիւնն է կատարած անարժեք երկրի իրաւալիցորդը եւ ժառանգորդը, ժխտում է այն»,- նշեց նա:

Հ.Դեմոնեանն ընդգծեց, որ Հայաստանը պատրաստ է ցանկացած կարգի երկխօսութեան, այդ թւում պատմաբանների մակարդակով: Մի-

աժամանակ նա նշեց, որ խօսք կարող է լինել պատմաբանների մակարդակով միայն այդ հարցի քննարկման մասին: «Հայկական կողմը թուրքերից աւելի շատ է շահագրգռուած, որպէսզի քննարկուեն եւ հաստատուեն պատմական այն վաւերագրերը, սկզբնաղբիւրները, ակնատեսների վկայութիւնները, որոնք փաստում են, որ իրականացուել է պետական մակարդակով ցեղասպանութիւն»:

Հ.Դեմոնեանը նշեց, որ Թուրքիայի կողմից հիմնախնդիրը ակնյայտօրէն քաղաքականացուած է եւ քրէականացուած. Թուրքիան հետապնդում է իր այն պատմաբաններին, որոնք բարձրաձայնում են Հայոց Յեղասպանութեան մասին, այն գրողներին, ովքեր իրենց ստեղծագործութիւններում արծարծում են այդ թեման: Այդպիսով, ըստ պատմաբանի, կարելի է եզրակացնել, Թուրքիան ինքը պատրաստ չէ որեւէ կարգի երկխօսութեան Հայաստանի հետ:

ՍԵԳՈԼԷՆ ՌՈՒԱԵԱԼ. «ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒՐԱՄԻՈՒԹԵԱՆԸ ԿՕԳՆԻ ԹՈՒՐԲԻ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻՆ ՊԱՅՔԱՐԵԼ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՔՄԱՆ ԴԷՄ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅՔ-Ֆէ»: Ֆրանսիայի նախագահութեան առաջատար թեկնածուներից մէկը՝ սոցիալիստ Սեգոլեն Ռուաեալը կարծիք է յայտնել, որ անդամակցութիւնը եւրամիութեանը կը նպաստի Հայոց Յեղասպանութեան ճանաչմանը:

«Անդամակցութիւնը եւրամիութեանը կ'օգնի Թուրքիայի դեմոկրատներին բարեփոխումներ իրականացնել եւ յաղթահարել ժխտողականութիւնը մի պետութիւնում, որը հերքում է Հայոց Յեղասպանութիւնը», - գրել է Ռուաեալը իր նոր գրքում, որից հատուածներ է արտատպել այսօր «Ֆայնէնշըլ Թայմզ»-ը:

Թերթը փաստում է, որ նախկինում Ռուաեալը յստակ չէր ար-

տայայտում իր վերաբերմունքը Թուրքիայի հնարաւոր անդամակցութեան նկատմամբ՝ ասելով, որ իր դիրքորոշումը «նոյնն է, ինչ Ֆրանսիայի ժողովրդին»:

Վերջին հարցումների համաձայն, Ռուաեալի օգտին պատրաստ է քուէարկել ընտրողների մօտ 25 տոկոսը, մինչդեռ աջակողմեան Նիկոլա Սարկոզիի վարկանիշը շուրջ 30 տոկոս է:

Սարկոզին այսօր հրաժարական է տուել ներքին գործերի նախարարի պաշտօնից՝ կենտրոնանալով ընտրարշաւի վրայ:

Նախագահական ընտրութիւնների առաջին փուլը կայանալու է Ապրիլի վերջին, իսկ երկրորդը՝ Մայիսի սկզբին:

ՅԱՆԿԱՐԾԱՄԱՅ ԵՂԱՒ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Շաբաւազուած էջ 1-էն

անց 56-ին կանչը ստանալէ յետոյ վարչապետի բնակարան մեկնած է միաժամանակ երկու սրտավերան կենդանացման խումբ. - «Արձանագրուել է սուր սրտային անբաւարարութիւն, սրտի կանգ, կլինիկական մահ»:

Պետրոսեան աւելցուցած է, որ կատարուած սրտավերակենդանացման բարդ միջոցառումները արդիւնք չեն տուած:

56-ամեայ Անդրանիկ Մարգարեան Հայաստանի Հանրապետութեան վարչապետն էր 2000 թուականի Մայիսէն ի վեր::

Վարչապետի մահուան կապակցութեամբ արտակարգ խորհրդակցութիւն տեղի ունեցաւ Ռոբերդ Քոչարեան մօտ, որմէ ետք ստեղծուեցաւ յուղարկաւորութեան պետական յանձնաժողով՝ Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսեանի գլխավորութեամբ:

Վարչապետի յուղարկաւորութիւնն ու թաղումը կատարուեցաւ Չորեքշաբթի, Մարտ 28-ին, որ նաեւ յայտարարուած էր սուգի օր: Անդրանիկ Մարգարեանի դագաղը

առաւօտեան ժամը 10:30-ին դուրս բերուելով իր բնակարանէն թափօրով առաջնորդուեցաւ դէպի Հանրապետական կուսակցութեան կենտրոնական գրասենեակ, ապա ՀՀ կառավարութեան շէնք եւ վերջապէս Օփերայի շէնք: Հոն ներկայ էին պետական անձնաւորութիւններ, պատգամաւորներ, դիւանագիտական ներկայացուցիչներ, օտարերկրեայ պաշտօնեաներ, մտերիմներ եւ պարզ քաղաքացիներ:

Իշխանամէտ ու ընդդիմադիր պատգամաւորներ, նախարարներ, նախկին վարչապետներ ու նախկին պաշտօնեաներ հերթով պատուոյ պահակ կը կանգնէին Անդրանիկ Մարգարեանի աճիւնի շուրջ: Շրջանցելով Օփերայի առջեւ հաւաքուած ժողովուրդը, վերջին պահուն ժամանեց նաեւ Ռոբերդ Քոչարեան, որ ինք եւս պատուոյ պահակ կանգնեցաւ:

Յաւակցութիւններ կ'ընդունէին Սերժ Սարգսեան, Տիգրան Թորոսեան ու Յովիկ Աբրահամեան:

Հորհանգտեան արարողութիւնը գլխավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Վեհափառը եւ ապա, Անդրանիկ Մարգարեանի աճիւնը՝ հազարաւոր ժողո-

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԵՐժՄ ՄԱՍՆԱԿՑԻԼ ԱՂԹԱՄԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԻՆ

Շաբաւազուած էջ 1-էն

եայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ կանոնական ծէսի համաձայն:

«Թուրքիայի իշխանութիւնների կողմից հայ ժողովրդի քրիստոնէական բացառապաշտութեանը դէմ ուղղուած այս գործողութիւնը չի կարող ընկալուել որպէս դրական քայլ հայ եւ թուրք ժողովուրդների փոխմերձեցման ճանապարհին՝ առաւել եւս ներկայ դարի՝ ժողովուրդների գործակցութեան եւ կրօնների ու մշակոյթների

րի երկխօսութեան համընդհանուր ձգտումի համատեքստում», - ըսուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին տեղեկատուական համակարգի հարդրագրութեան մէջ:

Մարտ 29-ին, նախատեսուած բացման արարողութեանը մասնակցելու հրաւերը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին երկրորդի անունով, ստացուած էր Վանի նահանգապետ Մեհմետ Նիեազի թանիլիլին՝ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան միջոցով:

Վուրդի ընկերակցութեամբ տեղափոխուեցաւ Կոմիտասի անուան Պանթիւն:

Աշխարհի տարբեր երկիրներու ղեկավարներու շարքին, Անդրանիկ Մարգարեանի մահուան առթիւ իրենց ցաւակցութիւնը յայտնեցին Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշ եւ Թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Էրդողան:

Միւս կողմէ, տարածուող լուրերու համաձայն վարչապետի ամենահաւանական թեկնածուն Սերժ Սարգսեանն է, որ այժմ կը վարէ

պաշտպանութեան նախարարի եւ Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) խորհուրդի նախագահի պաշտօնները:

ՀՀԿ-ի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը «Ազատութիւն» ռատիոկայանի մէջ հարցին ի պատասխան ըսած է,-«Տարիների փորձը ցոյց է տալիս, որ Սերժ Սարգսեանը նոյնքան վճառական է եւ աւելի շատ կարողանում է իմաստութեամբ ոգեկոչման դասեր տալ նաեւ այս օրերին»:

ՎԱՐՑԱԶՐՈՒՑ

ՎԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՑ

Վարցագրոյց Սոցիալ-Դեմոկրատական Վնչակեան Կուսակցութեան (ՍԴԿԿ) Շիրակի Մարզի «Արագած» մասնաճիւղի ատենապետ ԱՐԱ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՎԵՏ

ԶՐՈՒՑԵՑ ԱՐԹԻԻՐ ՕԳԱՆՆԶՈՎԸ

- Պարոն Սարգսեան, ի՞նչ աշխատանքներ է տանում այսօր ՍԴԿԿ-ի «Արագած» մասնաճիւղը եւ որքան անդամներ ունի:

- Այսօր Սոցիալ Դեմոկրատական Հնչակեան կուսակցութիւնը քաղաքական դաշտ է մտնում նորացուած, թարմացուած ծրագրով: Կուսակցութեան կազմում զգալի փոփոխութիւններ են տեղի ունեցել եւ այստեղ Մայր Հայրենիքում եւ Սփիւռքում: Վերջերս Համահնչակեան կեդրոնական վարչութեան ատենապետ ընտրուեց հայրենասէր մի անձնաւորութիւն՝ ի դէմս Սեդրակ Աճէմեանի, իսկ կուսակցութեան հայաստանեան կառուցի ղեկը ստանձնեց Լիւզմիրա Սարգսեանը: Այս երկու ղեկավար անձանց շնորհիւ միանգամից ակտիւացաւ Հնչակեան կուսակցութեան գործունէութիւնը: Կոնկրետ ի՞նչ է կատարում մեզ մօտ: Ունենք մշտական գործող գրասենեակ: Ամէն օր ընդունում ենք մօտ 50-100 քաղաքացիների եւ ուրախութեամբ պէտք է նշեմ, որ մեր կուսակցութիւնը բաւականին մեծ ճանաչում է ձեռք բերել, որպէս 120-ամեայ պատմութիւն ունեցող քաղաքական ուժ: ՍԴԿԿ-ն միշտ կանգնած է եղել հայոց պետականութեան կողքին՝ պաշտպանելով Հայ Դատի գաղափարները եւ հանդէս գալով Արցախեան հիմնահարցի արդարացի լուծման օգտին:

ՍԴԿԿ-ն Շիրակի մարզի «Արագած» մասնաճիւղում ունի աւելի քան 400 անդամներ: Մենք այսօր գործում ենք ընդդիմադիր քաղաքական դաշտում եւ անդամակցել ենք «Արդարութիւն» դաշինքին: Ի դէպ, նշեմ, որ ՍԴԿԿ-ն Սփիւռքում գործող միակ քաղաքական ուժն է, որն ընդդիմանում է Հայաստանի ներկայի իշխանութիւններին: Սակայն ընդդիմամանալ նաեւ Հայրենիքին եւ ժողովրդին: Մենք դէմ ենք հանդէս գալիս կլանային համակարգին, անօրինականութիւնների բազմաթիւ դրսեւորումներին, ալան-թաւանին: Հնչակեանները, ընդդիմադիր այլ կուսակցութիւնների հետ, պարտաճանաչօրէն մասնակցել են բոլոր հանրահաւաքներին, խաղաղ ցույցերին եւ երթերին: Մեր նպատակն է՝ խաղաղ ճանապարհով ձերբազատուել գործող վարչակազմից եւ դուրս հանել մեր ժողովրդին այս անելանելի թուացող վիճակից:

- Պարոն Սարգսեան, առաջիկայ ԱԺ ընտրութիւններին ընդդիմութիւնը, այդ թուում եւ ՍԴԿԿ-ն, որոշեց մասնակցել առանձին ցուցակներով: Միայն «Ժող-Յայրենիք» եւ Պաիպանողական կուսակցութիւնները կարողացան իրենց մէջ ուժ գտնել ու միաւորուել՝ ստեղծելով «Իմպիւմենտ» կոչուող դաշինքը: Ըստ ձեզ ինչո՞վ է պայմանաւորուած ընդդիմութեան նման դիրքորոշումը:

- Ինչպէս եւ շատ ընդդիմադիր կուսակցութիւններ, այնպէս էլ ՍԴԿԿ-ն ընտրութիւններին գնում

է ոչ թէ դաշինքով, այլ առանձին: Ասեմ ինչու: Որովհետեւ մենք արդէն զգում ենք, որ դարձել ենք այն ուժը, որը կարող է համապետական ընտրութիւններին միայնակ գնալ: Ի հարկէ, ելնելով անցեալի դասերից, դաշինք կազմելն աւելի նպատակաշարժար կը լինէր: Ինչպէս ասում են՝ «գեղ կանգնի, գերան կը կոտրի», մանաւանդ, երբ իշխանութիւնները «գեղ» չեն թողել: Բոլորը նրանց պատճառով արտագաղթել են: Ինչ վերաբերում է խորհրդարանական ընտրութիւններին միայնակ գնալուն, ապա ասեմ, որ դա ոչ թէ հնչակեաններիս, այլ որոշ ընդդիմադիր ուժերի առաջնորդների ամբիցիաների արդիւնք է: Դա մի հիւանդութիւն է, մոլուցք, որով տառապում են ոչ միայն իշխանութիւնները, այլեւ, ցաւօք, ընդդիմադիր գործիչներից շատերը: Իւրաքան

չիւր անհատ ձգտում է ինքը ղեկավարել քաղաքական գործընթացները եւ ուզում է, որպէսզի բոլոր ուժերը համախմբուեն հենց իր անձի շուրջ: Ես գտնում եմ, որ սոսկ ամբիցիաների արդիւնք էր, որ չկարողացանք ընդդիմադիր դաշինք ձեւաւորել: Թէպէտ, պէտք է դրանից ողբերգութիւն սարքել:

- Մեր երկրում տխուր աւանդոյթ է ձեւաւորուել, համաձայն որի բոլոր կարգի ընտրութիւններն ընթանում են ընտրակեղծիքներով, իսկ մեղաւորներն այդպէս էլ չեն պատժուում: Ինչպէ՞ս է պատրաստուում ՍԴԿԿ-ն այս քարտէլ այդ չարիքի դէմ:

- Այսօր մեզ առաջին հերթին հետաքրքրում եւ մտահոգում է այն հարցը, թէ ինչպէս պէտք է անցնեն առաջիկայ ընտրութիւնները, արդեօ՞ք դրանք լինելու են արդար ու թափանցիկ: Մենք պէտք է ձեռնարկենք բոլոր միջոցները՝ ընտրական գործընթացը վերահսկելի դարձնելու համար: Եթէ այս անգամ էլ արդար չանցնեն, ապա մեր երկիրը միջազգային ասպարէզում լրիւ կը հեղինակազրկուի: Եւ ուրեմն, ընտրակեղծիքներ իրականացնող անձանց ճակատին մէկընդմիշտ դաջուելու է «ազգադաւ» պիտակը: Այս օր ԱՄՆ-ի, Եւրամիութեան եւ մի շարք հեղինակա-

ւոր միջազգային կառույցների ուշադրութիւնը յառած է Հայաստանում անցկացուելիք ընտրութիւնների վրայ: Եթէ տանուլ տանք, ապա կը կործանենք մեր ազգի ու պետութեան ապագան: Ուրեմն, ՍԴԿԿ-ն այլ կուսակցութիւնների ներկայացուցիչների, դիտորդների եւ ԶԼՄ-ների աշխատակիցների հետ միասին ջանալու է ամէն ինչ անել ընտրութիւնները վերահսկելի դարձնելու եւ հնարաւոր տխուր հետեւանքներից խուսափելու համար: Այստեղ մեծ աշխատանքներ է կատարելու մեր նախընտրական շտաբը: Ճիշդ ասած, շատերն են այցելում մեր գրասենեակ: Մենք նրանց ոչ թէ կաշառել ենք ինչ-որ տուկի թելերով կամ կարտոֆիլով, այլ ներկայացրել եւ ներկայացնում ենք մեր գաղափարները, հայրենի երկիրը շէնացնելու վերաբերեալ մեր մօտեցումներն ու պատկերացումները:

Ինձ ուրախացնում է այն փաստը, որ մեր համաքաղաքացիներից շատերը լաւ գիտեն Հնչակեան կուսակցութեան պատմութիւնը, մասնաւորապէս ծանօթ են Մեծն Մուրատին, Փարամազին եւ նրանց գործած սիրանքներին:

- Իսկ ի՞նչ ակնկալիքներ ունիք

Շար.ք էջ 6

HOMENMEN  
Glendale Chapter

Celebrates

EASTER  
EGGSTRAVAGANZA

Sunday April 8, 2007  
2:00 pm

At The  
Brandview Collection  
109 E. Harvard, Glendale, California

Join us for feast, fun and Easter games  
with family and friends

For more info please call (818)384-2987

Donation:  
\$35 Adults, \$25 Children (5-12)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄՈՒՆԻՏՈՐԻՆԻ ՄՊԱՌՆԱԼԻՔԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԵԱՆ

ԿԱՐՃ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Չորս հազարամեակներու վրայ տարածուած պարսիկ ժողովուրդի պատմութիւնը, հակառակ իր քաղաքակրթական, մշակութային, նոյնիսկ կրօնական գետնի վրայ վայելած անվիճելի արժանիքներուն, պետական-քաղաքական մարզի մէջ, յատկանշուած է բռնատիրութեամբ Մեծն Կիւրոսէն մինչեւ Աճմէտինեճատ: 20րդ դարու երկրորդ կէսերէն աւին, յատկապէս սկսելով զարտուղի Մոսատտէղէն, ֆաշիստ Ծահէն, եւ իր հաստատած անարգ գաղտնի ոստիկանական դրութիւն՝ «Սաւազ»էն, եւ անցնելով Այաթոլլա Ռուհաւլա Խոմէյնիէն, Հաշեմի Ռաֆսանճանիէն, հասնելու համար Մոհամմետ Խաթամիի, եւ ի վերջոյ, աննախատեսելի եւ Արեւմուտքի նկատմամբ ատելութեամբ լեցուած Աճմէտինեճատի, իրան որ երբեմնի Պարսկաստանն է, քաղաքական կեանքի հիմնական դիժը հանդիսացած է բռնատիրութիւնը: Եթէ երբեմն փորձ ալ եղած ըլլայ հաստատելու յարաբերական ազատարհական միջնորոտ, այս եղած է ժամանակակեր եւ անցողակի, նոյնիսկ մակերեսային եւ սահմանափակուած ուսանողական շրջանակներուն: Այսօր, փաստօրէն, իրան կը հանդիսանայ իսլամական ծայրայեղական (fundamentalist) պետութիւն մը, հիմնականին մէջ՝ իսլամ շիի կրօնական աղանդի պատկանող, ուր ընկերային արդարութեան, մարդկային իրաւունքներու, ազատ կարծիքի, տեղծագործական ազատութեան, եւ նման երեւոյթներու նկատմամբ գոյութիւն չունի ոչ միայն արտօնութիւն եւ հասկացողութիւն, այլ կայ միայն ու միայն արգելք, կաշկանդում եւ պատիժ:

Իսկ եթէ հարցուի թէ ո՞րն է 21րդ դարու աշխարհաքաղաքական ամենանշանաւոր եւ քաղաքական գետնի վրայ, ամենէն վտանգաւոր գարգացումը, առանց այլեւայլի պիտի ըստի թէ այս կը հանդիսանայ Մերձավոր Արեւելքի մէջ զարգացած շրջանային գերտէրութիւն հանդիսացող իրանեան պետութիւնն է, որուն ազդեցութիւնը կ'երկարի հարաւային իրաքէն մինչեւ Սուրիա, Լիբանանի «Հըզպալլան», պաղեստինեան «Համաս»ը, եւ Միջերկրականեան փերու երկիրները: Աւելին կայ դեռ: Իրան կարող է ազդել շրջանի Սիւննի արաբական երկիրներ, Սէուդական Արաբիոյ, Եգիպտոսի, Քուէյթի, Արաբական էմիրաթներ-

րու, ուր կ'ապրին շիի կարեւոր փոքրամասնութիւններ, որոնց վրայ իրան ունի լուրջ ազդեցութիւն:

ԻՆՉՊԷՍ ՊԱՏԱՀԵՑԱԻ ԱՅՍ

Կարճ եւ կտրուկ, շնորհիւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու: Ամերիկան Անգլիոյ եւ Եւրոպայի այլ գաղութարարական երկիրներու հետ մեղակցաբար, միշտ ալ ուղղակի կամ անուղղակի կերպով միջամուխ եղած է Միջին Արեւելեան երկիրներու քաղաքական կեանքէն ներս, եւ անշուշտ, միշտ հետամուտ իր աշխարհաքաղաքական շահերը հետապնդելու եւ ապահովելու համար: Պահ մը եթէ մոռնանք Ամերիկայի միջամտութիւնները իրանէն ներս, Ռեզա Շահէն մինչեւ Խոմէյնի, իրանեան այս օրերու մագլցումը եւ ստացած կարեւորութիւնը կարելի է վերագրել Ամերիկայի տիրահազակ միջամտութեան եւ պատերազմին, իրաքէն ներս:

Ամերիկա, իբրեւ թէ կը յուսար հաստատել նոր, տեմոքրատական ընթացք մը Միջին Արեւելքի բռնատիրական միջավայրէն ներս, առանց անդրադառնալու պատմական այն իրողութեան որ կրօնական, սիւննի-շիի թշնամութիւնը, դժուար թէ լուծուի ամերիկեան միջամտութեամբ: Սատտամ Հիւսէյնի իշխանութեան կործանումը, իբրեւ թէ ազատ ընտրութիւններու միջոցաւ, իրաքէն ներս հաստատեց շիի մեծամասնական կառավարութիւն մը, որ այսօր, կը ձգտի իրաքէն ներս հիմնել իսլամական ծայրայեղ (radical) հանրապետութիւն մը: Հոս է որ երեւան կու գայ իրանեան տուեալը: Իրաքի հարաւը փաստօրէն դարձած է իրանեան նահանգ մը, իր ոստիկանութեամբ եւ տեղական «միլիտարիզմ»ով որոնք թեհրանէն կը ղեկավարուին: Իրան-իրաք պատերազմի օրերը վաղուց անցած են, եւ այսօր, փաստօրէն, իրաք կը հանդիսանայ այն շրջանը, ուրկէ ներս իրան անվիճելիօրէն դարձած է քաղաքական իսլամութեան անվիճելի առաջնորդ: Հակա-ամերիկեան միլիտարիզմը կապար Մոքթատա Ալ Սատր արդէն իսկ կը ծրագրէ յաջորդել Այաթոլլա Ալի Սիսթանիի, որ հիւանդ է, հետաքրքրական եւ մտահոգիչ երեւոյթը այն է որ իրան երբեք չի պահեր իր հակա-սեմական, հակա-իսրայէլեան եւ Մերձավոր Արեւելքը արեւմտեան ազդեցութեան գրկելու իր տրամադրութիւնը: Վերջին օրերու անգլիացի 15 ծովայիններու առեւանգումը, ՄԱԿ-ի ապահովութեան Խորհուրդի քուէարկած

«պոչթի» բանաձեւը, Արեւմուտքի դիւանագիտական ճիգերը, իրանի հիւլէական հետապնդումները կասեցնելու, այս բոլորի նկատմամբ, իրանի Մահմուտ Աճմէտինեճատ ղեկավարը ուղղակի արհամարհանքով կը վերաբերի, աւարկելով որ «ինք կը հետեւի թաքուն իմամի խրատներուն, քան թէ ՄԱԿի որոշումներուն»:

ԻՆՉ ԿՐՆԱՅ ՊԱՏԱՀԻԼ

Յատակօրէն, եթէ Ուսամա Պըն Լատընի, սիւնի, եւ Աճմէտինեճատի միջեւ, շիի, կրօնական բաժանումներու միջեւ լուրջ տարակարծութիւններ գոյութիւն ունին, եւ այս, դարեւ ի վեր, մէկ բանի մէջ, երկուքն ալ համաձայն են - քաղաքակրթութիւններու «փախում» մը կը ծրագրուի եւ արդէն իսկ գործադրութեան դրուելու սկսած է, փախում որ Մոսուլման աշխարհը, ղեկավարութեամբ իրանի եւ Պըն Լատընի, կը մղէ «անհաւատ» Արեւմուտքի դէմն: Միլիոնաւոր ճիհատիստ՝ «ղազի»ներ, սրբազան ասրեկիչներ, պատրաստ են մարտիրոսանալու, մինչ Արեւմուտքի մէջ, գոյութիւն ունի ճիշտ հակառակը - կեանքի հանդէպ սէր, մահուան վախ, եւ կոտորու ատելութիւն: Արեւմուտքի անունով, պաշարի առաջնորդ-ղեկավարը կը հանդիսանայ Ամերիկան, որ ներկայիս կը տապալուի իրաք-Աֆղանիստան, տեմոքրատ-հանրապետա-

կան հակառակութեան, նախագահական ընտրապայքարի, Արդարութեան նախարարութեան «գայթակղութեան», տնտեսական անապահովութեան ժխտական երեւոյթներու մէջ, ճորձ Պուշի իշխանութեան ստեղծած տագնապները բուրն ալ: Այս պայմաններու մէջ, տակաւին կը խօսուի իրան-Սուրիա տիւրկի, նոյնիսկ իրանի դէմ պատերազմական միջամտութեան, եւ միջազգային պատժամիջոցներու մասին, որոնց դէմ կը թուի ըլլալ ամերիկեան հանրային կարծիքը: Իսկ իրանցիները կը պնդեն որ «կարող են համբերող ըլլալ, քանի որ դարեւ ի վեր գիտեն գործ իրականութեան»:

Անգլիացի ծովայիններու հարցը շատ լուրջ հանգամանք կը կրէ: Արդեօ՞ք Անգլիա, որ ցարդ համբերող կը թուէր ըլլալ, նոյնիսկ կ'որոշէր իր բանակը քաշել իրաքէն, այս նոր զարգացումներու լոյսին տակ, եւ շատ հաւանօրէն Ամերիկայի եւ Իսրայէլի դրողմով, կարող է պատերազմական գործողութիւններու դիմել իրանի դէմ, Մոլլաներու սպառնալիքին առջեւ, ընտրութիւնները լաւի եւ վատի միջեւ չեն, այլ վատի եւ վատթարագոյնի միջեւ են, եւ սպասողական վիճակը կրնայ շատ ալ նպաստաւոր չըլլալ Արեւմուտքի համար: Իրան ապահովաբար ինքզինք հաստատած է իբրեւ շրջանային գերօր իշխանութիւն:

ՎԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՉՆԵԼ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՉ

Մարտնակուած էջ 5-էն

Աժ ընտրութիւններին: Կը յաջողուի՞ արդեօք ձեր կուսակցութիւնը յաղթանակել 5 տոկոսանոց արգելքը եւ մուտք գործել խորհրդարան:

- Ամէն կերպ ձգտելու ենք նուաճել պատգամաւորական տեղեր: Բայց, եթէ այնպէս ստացուի, որ չկարողանանք հասնել դրան, գոնէ պէտք է ձգտենք ղեմնկրատական ընտրութիւններ անցկացնել, որպէսզի իւրաքանչիւր քաղաքացու ձայնն արժէք ունենայ: Այ, ասում են, որ հնչակեանները միշտ հայրենասիրութեամբ են զինուած եղել: Նրանց անձնական «ես»ը չի հետաքրքրել, նրանց հետաքրքրել է «մենք»ը, ժողովուրդը, Հայաստանի ապագան: Մենք խելօք ժողովուրդ ենք, բայց ընտրութիւնների անցկացման օրերին դառնում ենք լեռնեցիներ: Մեզ մօտ իշխում է լեռների օրէնքը: Գոնէ այս անգամ հարկաւոր է կանխել այդ արատաւոր երեւոյթը եւ առաջնայել:

- Ո՞րն է Սոցիալ Դեմոկրատական Հնչակեան Կուսակցութեան գլխաւոր կարգախօսը եւ առաջիկայում ի՞նչ ծրագրեր է նախապատրաստում իրականացնել Շիրակի մարզի «Արագած» մասնաճիւղը:

- Մեր կարգախօսն է «Հայաստանը դարձնել խաղաղութեան եւ կայունութեան խորհրդանիշ»: Մինչ առաջիկայ ծրագրերի մասին խօսելը, համառօտ անդրադառնալու կատարուած աշխատանքներին: Վերջերս Գիւմրիում հիմնեցինք ՄԻ-ՀԿ «Փարամագ» երիտասարդական թիւը, որն ակտիւօրէն ընդգրկուած է քաղաքական դաշտում կատարուող բոլոր աշխատանքներին: Ուրախութեամբ պէտք է նշեմ, որ երիտասարդական նման մի կառուցց էլ գործում է Երեւանում: Այն կրում է հանրայն Սարգիս Տխրուտու անունը: Ինչ վերաբերում է առաջիկայ ծրագրերին, ապա ասեմ, որ ձգտելու ենք ընդլայնել մարզային մեր գրասենեակը՝ նոր թափ հարողով քարոզչական աշխատանքին:



**ABA**  
A.B.A. INSURANCE SERVICES  
Blue Shield of California  
Authorized Agent  
1975-2005  
**30th**  
ANNIVERSARY  
E-mail: BMaronian@AOL.com

**ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՐԱԺԵՇՏ Է**

ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԻԱՍԱՆԹՕ ՄԱՐՈՆԵԱՆ**

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ԱՄԿ ԶԱԲԱԹ

ԱՄԿ ԶԱԲԱԹ՝ ԺԱՆԱՊԱՐԿ ԽԱՉԻ

ԴՈՒՏ. Տ. ԶԱԽԷՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆՆԱՆ

Ծաղկազարդէն Ս. Զատիկ խաչի ճանապարհն է բոլորիս՝ հետքերովը մեր Տիրոջ եւ Փրկչին որ մուտք գործեց Երուսաղէմ վերջին անգամ, ուր դիմաւորուեցաւ խառնիճաղանձ բազմութենէն, ծերերէ եւ փոքրիկներէ, բարեմիտ հետեւորդներէ եւ չարամիտ օրինականներէ: Հանդիսաւոր էր մուտքը իր խոնարհութեամբ եւ հեզութեամբ, տրտում էին միանգամայն գալիք օրերը՝ հաշուուած ու նախատեսուած:

Ժանապարհը մեր Տիրոջ եղաւ ճանապարհը քրիստոնեայ ժողովուրդին, եւ աշխարհ մը ամբողջ հետեւեցաւ Տիրոջ նորոգուած հողով եւ գօրացած Գեթսեմանիի իր աղօթքներով: Վերջին հրաշքները նշանը տուին Յիսուսի վերջին օրերուն, երբ ան կեանքի կոչեց Բեթանիոյ իր բարեկամը Դազարոս՝ գերեզմանէն դուրս կանչելով զինք: Բացաւ աչքերը կոյրերուն որոնք Երիքովի մէջ »Տէր զի բացցին աչք մեր« աղերսեցին: Դարձի եկաւ Զաքէոս մաքսաւոր, որուն մէջ իջեւանեցաւ Յիսուս ի զարմացումն բոլորին, փրկութիւն բերելով Զաքէոսի տան:

Կեանքի վերադարձ, աչքերու լոյս, մաքսաւորի դարձ, երեքն ի մի եկան անգամ մը եւս մեզի՝ հաւատացեալներուս յիշեցնելու թէ Աւագ Շաբաթը սկիզբ պէտք է առնէր բարեգործութեամբ եւ փրկագործութեամբ՝ որուն նշաններն եղան այդ շեշտուած հրաշքները:

Խաչի ճանապարհը գծուած էր, եւ անգամ մը որ Յիսուս Երուսաղէմ մտաւ, գիտակ իր անմիջական ճակատագրին, պիտի կատարէր ու լրացնէր այն բոլորը որոնք եզրաչանգիչ նպատակը պիտի հաստատէին՝ ըլլալ իրեններուն հետ, թէ իսկ անոնք ուրանային զինք, սաստելով տաճարը պղծողները, լուսալով աշակերտներուն ոտքերը, Վերջին Ընթրիքին իր կենարար Ս. Հաղորդութիւնը հաստատելով, մատնուելով, չարչարուելով եւ ի վերջոյ խաչին վրայ տարածելով իր անարատ բազուկները որպէս մահապարտ:

Հոս կանգ չէր կրնար առնել անշուշտ Աստուծոյ նախախնամեալ ծրագիրը: Թաղեալ Յիսուս կը դառնար երեք օրեր ետք Յարուցեալ Քրիստոս, ու հոս կը կայանար Աւագ Շաբթուան իսկական սկիզբը: Յարուցեալ Քրիստոս կ'երեւէր իր աշակերտներուն քառասուն օրեր ի նշան աստուածային յաղթութեան մինչեւ իր համբառնալը դէպի Երկինք:

Ահա ճանապարհը իր ամենատրտում եւ ամենալալթ ընթացքով որուն հաւատացեալներ պարտին ճանապարհորդակից ըլլալ մեր Տիրոջ, իր հետ մուտք գործելով Երուսաղէմ, բանալով մեր աչքերն ու ակնկալելով իր օրհնաբեր Յարութեան կենսալից պարգեւները, հաւատարմօրէն քայլելով իր հետ, սննդակից դառնալով իր կրած դառնութեանց, մնալով միշտ իր պատուիրաններու գործադրութեան մէջ եւ հրաւերներուն դիմաց:

Աւագ Շաբաթը լուր կեանք

մը ընդգրկեց իր մէջ: Կեանքի մը ամենէն կենսական բաժինը նոյնիսկ, որ եղաւ մեզի հետեւորդներուս սրտագրաւ եւ փրկարար բաժինը պայմանով մը սակայն: Եթէ արժանաւորապէս ընթացանք քառասնօրեայ պահեցողութեան եւ ինքնաճանաչման շրջանին աւելի մօտենալով մեր Տիրոջ, զգալով անոր ժամանակաւոր «բաժանումը» մեզմէ, երբ սուրբ պատարագի ընթացքին, փակ խորանին առջեւ տրտում, լոյսին կը դիմէինք Ս. Շնորհալի Հայրապետի հոգեպարար Արեւազայով, ու խուսկի մեղմանուչ բուրմուքով Ս. Նարեկացին կը փնտռէինք որ միջնորդէր մեզի որ Աստուած քաղցրութեամբ ընդունէր մեր դառնակալիճ աղաչանքը ի պաշխարանքով, այն ատեն միայն խոնարհագոյնս կարելի պիտի ըլլար եւ ընդունելի մեր Քրիստոս Յիսուսով Աւագ Շաբթուան ճանապարհը գտնելու, տեսնելու, վկայելու եւ հետեւելու հաւատքով եւ երկիւղածութեամբ: Զկայ Աւագ Շաբաթ առանց

քառասնօրեայ պահեցողութեան. չկայ Յարութիւն առանց խաչելութեան. չկայ խաչելութիւն առանց չարչարանաց. չկայ չարչարանք առանց յանձնառութեանց եւ գերագոյն սիրոյ. եւ վերջապէս չկայ յանձնառութիւն առանց անխառն եւ լիագոյն նուիրումի՝ որպէս պատասխան աստուածային կամքի եւ անոր գործադրման »ինչպէս երկնքի մէջ, նոյնպէս երկրի վրայ«:

Աւագ Շաբաթը ուրեմն իր յաղթական միաշաբաթով, Զատիկ լոյս առաւօտուն, բացաւ դռները Երկնքի Արքայութեան զայն բերելով երկիր ու դարձնելով երկնաքաղաքացիներ այն բոլոր մարդիկ որոնք ճանապարհորդակից եղան Քրիստոսի, եւ ուղղափառ հաւատքով, բարի գործքով, Տիրոջ Մարմնին եւ Արեւան սուրբ հաղորդութեամբ Քրիստոսի յաղթական երթը եկեղեցիի վերածեցին երկրի վրայ Ս. Հոգիի շնորհներով յագեցած որպէս մնայուն գրաւականը հիմնադրին Քրիստոսի յաւերժական ներգործութեան:

Bulgarian pianist Varta Tchakarian has performed as a soloist in Bulgaria, Holland, France and the United States. She is a winner of the De Bose National Piano Competition, Baton Rouge, Louisiana. She is also an award winner of numerous competitions in her native country. In 2005, Brazilian composer Liduino Pitombeira dedicated to her Suite Brasileira. She premiered the piece in a concert of the National Association of Composers in the USA, in Baton Rouge, Louisiana. The New York premier took place at Yamaha Artist Services as a part of her New York debut recital in May, 2005 where Ms. Tchakarian was featured as a Musica Bella Artist. Ms. Tchakarian has been active as a chamber musician for the past 10 years. She won the Bulgarian National Competition for best performance of German/Austrian music, chamber music category. Ms. Tchakarian earned her Master of Music Degree from the Juilliard School under the guidance of Seymour Lipkin, and her Bachelor of Music of Degree from Louisiana State University as a student of Constance Carroll. Currently, Ms. Tchakarian is on the faculty of the Piano School of New York City.

Tickets are \$25.00. For reservations and for further information you may call Louisa Janbazian at the AMAA at 201-265-2607, Elbiz Baghdikian at 201-615-4943, Ida Gueyikian at 732-946-2730, Seta Nalbandian at 201-871-1352 and Rosemarie Ashbahian at 718-937-5014. A reception to meet the artists will follow the recital.



Varta Tchakarian

sion orchestras and the Armenian Philharmonic Orchestra. In 1996 he was a prizewinner of a prestigious international vocal competition "Concurso Internacional de Canto Francisco Vinas" in Spain. In 1998 he was a soloist at the Juilliard Opera Center, in the United States of America. In 1998 and 1999 as a soloist at Juilliard, he received the Schumann Fund Award, Edward Nobel Heritage Foundation Award and the Armenian Scholarship Fund Award at the Juilliard School. In April 2001 he performed at the Los Angeles Philharmonic Hall, Oscar Hall, in Verdi's Requiem with Maestro Ohan Durian and the Pacific Symphony Orchestra. From 2002-2005 auditions include those with Maestro



ՄԴԿ 120-ԱՄԵԱԿ

# ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԳԱՂԱՓԱՐԻ ԸՆԾԵՐՈՎ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆ  
(Շարունակում Գաղափարի թիւէն)

1988 փետրուար 20ին առաւօտեան բազմազան ժողովուրդ հաւաքուեց Օփերայի Հրապարակ, մի թիւնկը դեկավարում էին Սիլվա Կապուտիկեանը, Ջորի Պալապեանը, Իկոր Մուրադեանը, Սարուխանեանը, Համբարձում Գալստեանը, երրորդ օրը 500,000 հաւաքուեցին Ղարաբաղը Հայաստանի միացման համար եւ սկսան գոռալ «Ղարաբաղը մերն է», նոյն ժամանակում Ղարաբաղը ոտքի կանգնեց բացառապէս միացում, պաշար, պաշար մինչեւ վերջ, առաջին ճառ խօսացողը Սիլվա Կապուտիկեանն էր, «Ժողովուրդ ձեր համաձայնութեամբ ընտրէք երկու հոգի մեկնելու Մոսկուա Կորպաչովի հետ տեսակցելու», ընտրութիւնը կատարուեց Ջորի Պալապեան եւ Սիլվա Կապուտիկեանը եւ նոյն օրը երկուսով մեկնեցին Մոսկուա 20 րոպէ տեւողութեան, տեսակցութիւն ունեցան հասկցնելու եղելութիւնը, 20 րոպէ տեւած խօսակցութեան ընթացքին Կորպաչովը բացատրել է, եւ ձեր պատմութիւնը շատ լաւ գիտեմ, գնացէք ձեր ժողովուրդին հանգստացրէք բոլոր ձեր հարցերը եւ կը լուծեմ, Ղարաբաղը ոչ թէ Ղարաբաղ է կոչուում, այլ Արցախ: Յաջորդ օրը Կորպաչովը Լիկաչովին ուղարկում է Պաքու կառավարական մարդկանց հետ տեսակցելու, դուք հանգիստ նստել էք աթոռին Հայաստանի եւ Ղարաբաղի ժողովուրդը ոտքի են ելած Ղարաբաղը միացնելու Հայաստանին, ազգերի որոշ կառավարութեան մարդիկ պատասխանել են, հայերը մոռացան 1915 թուականը դաս չեղաւ իրենց, եթէ որ հայերի կանանց եւ երեխաներին սպաննեք նրանք կը վախենան եւ ընտրում են Մոսկուայի թիւնը քանի որ 70 քիլոմետր հեռավորութեան վրայ է ոչ մէկը չի տեսնել ինչ որ կատարուի: 1988 փետրուար 23ին բանտից ելած մի քանիսին, Իլիա Մասնետովի գլխավորութեան յանձնարարութիւն են տալիս, նախօրոք միր առաջ հայերի տունները աչքի տակ առնելով, յաջորդ օրը սկսում են իրենց վաչրագ գործողութիւնները, հայ կանանցից երկու հոգին մերկացնելով փողոցի մէջտեղը սկսում են վարել, հայ մարդու աչքը սղոցով կտրում են, ամէն տեսակի դաժանութիւն կատարում են, մինչեւ իսկ հիւանդանոցի բարձր յարկից լուսամուտից հիւանդ մարդկանց ցած էին նետում մահանալու համար, տունների մէջ մտնում էին առանց խնայելու կին, երեխաներին սպաննում էին, իսկ փախչող տղամարդկանց ետեւից կրակում էին, 42 հոգի մահացան 70 հոգի վիրաւորուեցին, Մոսկուայի փախած երիտասարդներ գլուխին կապած վիրաւորուած վիճակով բարձրացան Օփերայի բեմահարթի վրա եւ սկսան պատմել ինչ որ կատարուել է Մոսկուայի թիւնը, ազգերին բռնի օգտուելով սկսան Պաքուի հայերին տեղահանել, Մոսկուայի թիւնը նոյն վաչրագութիւնը չի լինելու համար, ռուսական զօրքը մտաւ Պաքու իրենց ռազմական թեխնիկայով եւ պարետայի ժամ հռչակեցին: Ազգերին բռնաբարակութեան գինուորական օրէնքներին եւ սկսան կրակել գինուորների վրայ: Ռուսական գինուորները

առանց խնայելու ոչ մէկին, կրակեցին գրահապատ մեքենայից ժողովուրդի վրայ եւ 120 հոգի մահացան, 300 հոգի վիրաւորուեցին, ազգերին բռնաբարակութեան օգտուելով գինուորները Պաքու քաղաքի լոյսերը սկսան անջատել, ռուս գինուորներին թողնելով մթութեան մէջ: Մի թիւնկները շարունակում էին մէկ մի լինոն հասնող ժողովուրդին ի վիճակի չէին հինգ հոգին դեկավարել: Սիլվա Կապուտիկեանը հրաժարուեց, Ջորի Պալապեանը, Սարուխանեանը, Իկոր Մուրադեանը թողեցին գնացին Ղարաբաղ մի թիւնկները կազմակերպելու համար, Լեւոն Տէր Պետրոսեանը տեսնելով բազմութեան մի թիւնկը շարունակելու համար հետը բերեց իր հաւատարիմ ընկերներին կազմակերպելու համար Ղարաբաղեան կոմիտէն: Աշոտ Մանուչարեան, Արտաշէս Գեղամեան, Արշակ Սաթրեան, Խաչիկ Սեմադրեան, Վանօ Սիրադեղեան, Բաբգէն Արաքսեան, Վազգէն Սարգիսեան, Պարոյր Հայրիկեան, Վազգէն Մանուկեան եւ Համբարձում Գալստեան:


Ղարաբաղեան կոմիտէի առաջին գործը եղաւ Հայաստանի մէջ 160,000 ազգերին տեղահանել իրենց երկիրը եւ առանց մէկի քիթը արիւնքելու տրամադրեցին ավթօ մեքենաներ տեղափոխելու ապրանքները մինչեւ ազգերին սահմանը: Թուրքը մտնում է վաչրի թուրք, հայերի այնքան լաւութեան փոխարէն, Հայաստանից գնացող ազգերի երիտասարդները գինուորացի եւ յարձակուեցին փոքր վետի Մուտավին գիւղի վրայ, բոլոր գիւղի ժողովուրդը ոտքի կանգնեց որսորդական հրացաններով, դիմադրեցին ազգերին դէմ, տղաներից մէկը վիրաւորուեց, Մովսէս Կորկինեանը ընկերջը ազատելու ժամանակ ինքն ալ վիրաւորուեց եւ մահացաւ: Առաջին անգամ օփերայի հրապարակում եռագոյն դրօշը պարզեց եւ անկախութիւն պտուց Մովսէս Կորկինեանը:

Շուտով լսուեց Կիրովապատում տեղի ունեցած հայերի կոտորածը եւ հայ կամաւոր ֆետայիները սկսան դիմադրել թշնամու դէմ, Հայաստանը տեսնելով Ղարաբաղի հերոս մարտիկներին, թիկունք կանգնեց օգնելու յաղթանակի հասնելու համար, իսկ սփիւռքի ժողովուրդը փողով օգնեց նաեւ գինամթերք գնելու, շատ մարդիկ առանց գիտակցութեան մեղադրում են Ղարաբաղեան կոմիտէի տարածած քաղաքականութեան, եթէ որ Լեւոն Տէր Պետրոսեանի փոխարէն ուրիշ մէկը լինէր, չէնք կարծեր որ կարող է աւելի վատը լինէր: Ազգերին բռնաբարակութեան վրայ աչք ունէին, առիթից օգտուելով պիտի հայաթափէին Ղարաբաղը, իրենց նպատակին հասնելու համար: Ազգերները սկսան տեղահանել Պաքուի հայերին, 300,000 հայեր բնակում էին Պաքուի մէջ, շատերը գնացին Ռուսաստան, մի մասն ալ դէպի Հայաստան: Ամէն օր ցերեկուայ ժամը 1:00ին գնացքը գալիս էր լուսամուտի ապակիները ջարդուած մէջի մարդիկ վիրաւորուած, մի քանի տղաներով աշխատում էինք կաշարանում վիրաւորներին տեղափոխելով հիւանդանոց, մնացած մարդկանց տանում էինք գրասենեակ արձանագրուելու որտեղ

որ պէտք է հաստատուէին: Բոլոր վակոնների վրայ կաւիճով գրութիւններ կային ազգերին լեզուով, եւ որ լեզուն լաւ էի հասկանում, կարողում էի եւ բացատրում, բոլոր հայ հոյանքներ են եւ շնորհաւորում էին երկրաշարժի եղած դէպքերի համար: Երբ ես կայարանից դուրս ելայ, մարդիկ խառնուել էին իրար, երկրաշարժ տեղի ունեցել 9 պալ ուժգնութեան էպի-կեդրոնը Նալպանդ գիւղաքաղաքում 1988 Դեկտեմբեր 7ին, Լենինականը աւերուել է, նաեւ Սպիտակ, Կիրովականը եւ բաւականին գիւղեր քանդուել, փլատակների տակ շատ մարդիկ են մնացել օգնութեան կարիք են զգում, կաշարանի մարդիկ ովքեր մեքենաներ ունէին գնացին Լենինական, հետեւին տանելով հաց, պանիր, երշիկ, եւ ալ յաջորդ օրը առաւօտեան Մերկելեան ինստիտուտի տղաների հետ միասին գնացին Լենինական, տուժածների օգնելու համար: Երբ Լենինական մտանք ահ-

ռելի տեսարանի առաջ կայնեցինք, ընդամենը 4 բարձիչ մեքենաներ կային, ճանապարհների խճողումը մեքենաների արգելք էր հանդիսանում մուտք գործելու Լենինական: Բարձիչ մեքենաները եւ շտապ օգնութեան մեքենաները ժամեր էին տեւում մուտք գործելու երկրաշարժի տարածք օգնութիւն ցուցաբերելու փլատակի տակի տուժածներին, մարդիկ բահերով քանդում էին դիակները հանելու համար: Բարձր յարկանի շէնքերը սեմնի զակասութեան պատճառով խճաքարի էր վերածուած, ոնց որ մեքենաները բերեն եւ խճաքարեր թափեն: Մենք սկսանք աշխատել մի շէնքի վրայ հանելով 4 դիակներ: Բոլոր մայրի երկարութեան դիակները քով քովի դրուած վրաները ծածկուած սպիտակ սաւանով, եղանակը ցուրտի պատճառով բոլոր կողմերը կրակ են վարած, երեխաները տաքանալու համար, մարդկանց արցունքները չո-

Շարք էջ 17



**ՊՈՒՍԱԿԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ**  
ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS

Պոլսահայ Միութիւնը ինչպէս ամէն տարի, կը ծրագրէ կրթաթոշակ յատկացնել Գոլէնի եւ Համալսարանի յաջողագոյն ուսանողներու: Խնդրարկուները պէտք է.

1. Հայ ծագում ունենան
2. Ամբիկայի Միացեալ Նահանգներու մէջ չորս տարուայ գոլէնի կամ համալսարանի դասաւանդութեան յանձնարարութեամբ ստացած ըլլան (full time)
3. Ցուցաբերեն լաւ նիշեր

Պոլսահայ Միութեան կրթաթոշակի թեկնածու բոլոր աշակերտները պէտք է լրացնեն դիմումագիրը եւ յանձնարարական նամակները որոնք կարելի է ստանալ այցելելով <http://www.oia.net/scholarship> եւ կամ խնդրել նամակագրութեամբ: Պոլսահայ Միութեան կրթաթոշակի Յանձնարարութեամբ պիտի վերաբնակէ բոլոր դիմումագիրները եւ պիտի ընտրէ: Այն աշակերտները որոնց ակադեմիական եւ յանձնարարական յատկանշանքները գործունէութիւնները ցոյց կու տան խոստման իրութիւն: Յատուկ նկատառում պիտի տրուի այն խնդրարկուներուն որոնք մտնեն կապ ունին Հայկական համալսարանի գործունէութիւններու հետ: Գոլէնի կրթաթոշակի յատկացումներուն գումարին մտաւորապէս կէտը պիտի տրուի Պոլսահայ ծագում ունեցողներուն:

Ամրոցացած դիմումագիրները մինչեւ **Յունիս 04, 2007** րուականը պէտք է ուղարկուած ըլլան **հետեւեալ հասցէին:**  
**THE ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS**  
**SCHOLARSHIP COMMITTEE**  
**P.O. Box 55153 Sherman Oaks, CA 91413**

As it does every year, the Organization of Istanbul Armenians plans to award a number of scholarships to Outstanding college and university students. To be eligible an applicant must

1. Be an individual of Armenian descent.
2. Be a full-time student in an accredited four year college/university or a full-time graduate student in the United States
3. Demonstrate academic excellence

All students to be considered for an OIA Scholarship must complete and mail-in an application form and letters of recommendation, available for download at <http://www.oia.net/scholarship> or by request through the mail. The OIA Scholarship Committee will review all applications and select students whose academic and extra-curricular activities show the most promise. Special consideration will be given to applicants involved in Armenian community activities. Roughly half of total amount allocated for college scholarships will be given to students of Istanbul Armenian descent.

Completed applications must be submitted no later than June 04, 2007 to the following address:  
**THE ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS**  
**SCHOLARSHIP COMMITTEE**  
**P.O. Box 55153 Sherman Oaks, CA 91413**

**ԱՅԺՄԵԱԿԱՆ ՆԻԹԵՐ**

**ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ  
ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ  
ԶԵՆՆԱՐԿԻՆ**

ԽՄԲ. - Ստորել՝ Մարտ 18, 2007ին Ամերիկայի 3այ Գրողներու Միութեան կազմակերպած Յարուծ Սասունեանի մեծարանքի հանդիսութեան, Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ Յարուծ Տեր Դալիթեանի ելոյթը:

Այսօր, Հայ Գրողներու Միութեան նախաձեռնութեամբ հաւաքուած ենք այստեղ, մեծարելու Պրն. Յարուծ Սասունեանն ու Լինսի Հիմնարկը, լիբանանահայ դպրոցներու նիւթական կարիքներուն մեծ օգտակարութիւնը ցուցաբերելուն համար: Այս կը նշանակէ որ այստեղ հաւաքուածներս կը գիտակցինք հայ դպրոցի գոյութեան անհրաժեշտութեան եւ անոր առաքելութեան՝ ջանքերու բարձրորակ կրթութիւն եւ հայեցի դաստիարակութիւն: Ու այս գիտակցութեամբ կը գնահատենք ու կը մեծարենք բոլոր անոնք, որոնք կը նպաստեն այս նպատակի բարգաւաճման: Իրաւամբ ըսուած է, թէ կրթութիւնը բանալին է ամէն յառաջդիմութեան: Երբ Արիստոտելին հարց տուած են թէ կրթեալ մարդը որքանով գերադաս է անկիրթ մարդէն, անոր պատասխանը եղած է «այնքանով որքան շնչող էակը անշունչ դիակէն»: Գիտակցելով այս իրականութեան, մենք պէտք է խորապէս համոզուած ըլլանք որ եթէ մենք ազգովին պիտի յառաջդիմենք, ապա մեր պարտքն է պայմանները ստեղծել մեր նորահաս սերունդներուն հայթայթելու կրթութիւն: Պատմութիւնը վկայ է, ինչպէս ըսած է Whitney Griswold գրաքննիչն ու

հաւատաքննիչը միշտ պարտուած են: Վատ գաղափարները զգեստելու միակ հաստատ միջոցը լաւ գաղափարներու տարածումն է: Լաւ գաղափարներու աղբիւրը իմաստութիւնն է, իսկ իմաստութեան հասնելու ամենէն ապահով միջոցը աննախապաշար կրթութիւնն է:

Անդրանիկ Ծառուկեանի վկայութեամբ, երբ 1930-ական թուականներուն Միջին Արեւելքի նորակազմ գաղութներու մէջ զարկ կը տրուէր դպրոցաշինութեան աշխատանքին, Ամերիկայէն Լէյլա Գարակէօզեանի զեղեցիկ նախաձեռնութիւնը դուռ կը բանար կուսակցական վէճերու ու մարդիկ նոյնիսկ կը սպառնային քանդել այն դպրոցին պատը, որ «հակառակորդ կողմը» կը յանդգնէր կանգնեցնել: 70-ամեակ մը ետք, Լինսի Հիմնարկի եւ Պրն. Սասունեանի նախաձեռնութիւնը ցոյց կու տայ, որ որոշ յառաջխաղացք մը կայ վատ գաղափարները լաւ գաղափարներով զգեստելու ճամբուն վրայ: Բոլորիս պարտքը պէտք է ըլլայ այսպիսի լաւ գաղափարներու յաւելեալ տարածումը, որպէս զի գալիք սերունդներու յառաջդիմութիւնը աւելի հաստատ ու ապահով ըլլայ: Այս գծով կայ նախաձեռնութիւն մը, որ մենք կը խորհինք կրնայ

**ԻՐ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱԴԱՐՅԻ ԿԻՍՈՒՆ՝ ԿԵԱՆՔԻՆ ՅՐԱԺԵՇՏ ՏՈՒՄ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ**

**Շարունակուած էջ 1-էն**

հեռացնելու կապակցութեամբ: Իր կողմէ կատարուած ուժգին հերքումները, իր վարչապետական առաքելութեան հաւատարմութիւնը, ժողովուրդին հանդէպ իր տածած սէրը, զինք հաստատ պահեցին իր ազգու հանգամանքին մէջ:

Իրօք, շնորհիւ իր համեստ ու պարզ նկարագրային գիծերուն՝ Մարգարեան այն ուժեղ եւ հաւատար առաջնորդը հանդիսացաւ, որ շատ անգամներ երկիրը փրկեց կարելի ուժգին տագնապներէ:

Իր գործակիցները իր մէջ գնահատեցին գործունեայ, խորը գիտակից եւ երկրէն ներս ստեղծուած ներքին քաղաքական կացութիւնները լրջօրէն գնահատող պետական մարդը:

Հայ մտաւորականը իր մէջ ողջունեց «սրտցաւ մեկեմասը»:

Հայեկեղեցիին՝ «եկեղեցւոյ բարեկամը»:

Բոլոր այս վկայութիւնները կու գան փաստելու, որ Անդրանիկ Մարգարեան յաջողեցաւ ստեղծել ներքին քաղաքական կայունութիւն մը:

Նպաստել Ամերիկայի տարածքին հայ դպրոցաշինութեան տարածման ու հայ դպրոցներէն դուրս մնացող այն մօտ 95%-ը հայ աշակերտութեան ներգրաւման: Այդ մէկը վերջին տարիներուն հրապարակ նետուած դպրոցական voucher system-ի գաղափարն է: Բարձր գնահատելով Լինսի Հիմնարկի եւ Պրն.

Շնորհիւ իր չափաւորական գործելակերպին, ան կրցաւ դառնալ ընդունելի խօսակից մը գործող բոլոր հատուածներու համար: Շնորհիւ իր նկարագրային, պարկեշտ, ուղղամիտ ու սկզբունքային յատկանիշներուն, ան գնահատուեցաւ իր ժողովուրդին կողմէ:

Ներկայիս կը տիրէ այն մտահոգութիւնը, թէ նախընտրական այս պայմաններուն մէջ խաղաքարքերը կրնան յեղաշրջուիլ, Անդրանիկ Մարգարեանի անհետացումով:

Այս նախատեսութիւնը ինքնին, որ այս անգամ կու գայ հայրենի մամուլի սիւնակներէն, փաստօրէն կը փորձէ ֆողագեղծել այն ընտրակեղծիքներու պատրաստութիւնը, որուն արդէն իսկ լծուած են հանրապետութեան գերագոյն առաջնորդութիւնը:

Մենք կը հաւատանք, Մարգարեանի ոգին ձախողութեան պիտի առաջնորդէ նիւթուած ամէն ծրագիր ու դաւադրութիւն:

Մշտնջենական հանգստութիւն, վարչապետ Անդրանիկ Մարգարեանի յոգնաբեկ ոսկորներուն:

Յարուծ Սասունեանի նախաձեռնութիւնը լիբանանահայ դպրոցներու օժանդակութեան գծով, մենք կ'ակնկալենք որ voucher-ի գծով եւս դուք կարելոր դերակատարութիւն կրնաք ունենալ եւ մենք պատրաստ ենք գորավիզ կանգնելու ձեզի: Շնորհակալութիւն եւ վարձքերնիդ կատար:




## Slim-Band Weight Loss Centers

**David G. Davtyan M.D., FACS, FICS**

Եթէ ուզում եք նիւթաւ արագ եւ ընդմիշտ եւ նորից լինել առողջ եւ գեղեցիկ, Վիրաբոյժ Դաւիթ Դաւթեանի կենտրոնը առաջարկում է անվտանգ եւ ապահով նիւթաւ լաւագոյն միջոցը:

# “LAP-BAND”

2001 թուականից մեր փորձառու եւ նուիրուած անձնակազմը օգնել է հարիւրաւոր հայերի եւ ամերիկացիների նիւթաւ եւ վերադարձնել իրենց գեղեցկութիւնը, առողջութիւնը եւ երջանկութիւնը:



**DAVID G. DAVTYAN**  
M.D., FACS, FICS

American Board of Surgery  
American Board of Bariatric Medicine  
Fellow American College of Surgeons  
Fellow International College of Surgeons  
American Society of Bariatric Physicians  
American Society for Bariatric Surgeons  
American Society of Breast Surgeons  
American Society of Clinical Oncology  
American Society of Surgical Oncology  
European Society of Surgical Oncology

GLENDALE

BEVERLY HILLS

ORANGE COUNTY

We offer attractive financing.  
LAP-BAND is now approved by Blue Cross.  
Medicare and other insurance companies

We also specialize in treatment of:  
**CANCER** and diseases of

- Breast
- Colon
- Stomach
- Liver, Pancreas
- Gall Bladder

## GLENDALE (818) 546-1500

[www.LapBandLa.com](http://www.LapBandLa.com)

# ԱՐՄԵՆ ԼԻՊԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ

Շահան Շահնուր, ուղն ու ծուծով հայ մարդ՝ առաջինը հանդիսացավ որ իր կարչնեղ եւ մտրակող արձակով, հնչեցուց ասագանգը սփիւռքահայութեան գլխուն կախուած դամոկլեան սուրը ուժացումին եւ այլասերումին: «Նահանջը Առանց Երգի» եւ «Յարալէզներուն Դաւաճանութիւնը» սփիւռքացած հայութեան ցաւերուն ձեն-ձերումն էր, տրուած՝ բարձր արուեստով, ցնցող պատկերներով եւ պայթուցիկ յուզականութեամբ: Այդպիսով, Շահնուր լիովին տուած եղաւ իր տուրքը ազգին, երբեմն նոյնիսկ հալածուելու գնով: Հիմա արդէն բացալստուած է թէ ան կունակ չդարձուց հայութեան: Պարզապէս, համաշխարհային մեծ պատերազմն ու քայքայուած իր առողջութիւնը զինք հեռացուցին կեանքի սովորական ընթացքէն եւ հայութեան փոթորակից թատերաբեմէն: Շատ բնական պիտի ըլլար, որ պայմաններու եղբրական պարտադրանքով, կեանքի եւ մահուան իր մեծ գուպարին մէջ, լքուած եւ առանձնացուած, ան իր նայուածքին եւ մտորումներուն կիզակէտը, պահ մը, փոխադրէր նոր փորձառութեան վրայ: Այլ, մարդու անտեսուած, լուսանցքի մէջ դրուած այն տեսակն էր՝ իր իսկ անձով եւ հիւանդներու անմիջական շրջապատով մատչելի մնացած՝ բերուեցաւ գրականութեան, մեծ մասամբ բանաստեղծութեամբ եւ այն ալ ֆրանսերէնով: Բանաստեղծութիւնը կարճ ըլլալուն՝ նուազ յոգնեցուցիչ էր, այնքան յարմար հիւանդ մարդու առողջական վիճակին եւ հոգեկան բարեխառնութեան: Իսկ Ֆրանսերէնը ըսինք մթնոլորտին պարտադրանքն էր, որ այդ օրերուն կը

վարարէր գերիրապաշտութեան բացառիկ շրջուածքով, չէր կրնար իր թաւալքին մէջ չ'առնել նաեւ լեզուական ընտելացումով եւ գեղարտական լիցքաւորումով արդէն հասունցած Շահնուր-Արմէն Լիւպէնին պէս գեղապաշտ հոգիով գրողը:

Ճիշդ է, նեղցան իր տեսադաշտն ու հորիզոնը, բայց բնաւ չհասարակցան եւ ո'չ ալ սահմանափակուեցան անոնք: Բանաստեղծը իր տաղանդին ուժգնութեամբ, նայուածքին ինքնատուութեամբ յաջողեցաւ հիւանդանոցային իւրաքայտուկ աշխարհը վերակերտել անոր՝ խոր, մարդկայնական յուզաշիւտով եւ ցաւ ու տառապանքի տրամաթիզով, եւ գայն հասցնել մեծ ու լայն «աշխարհ»ի մը հնչականութեան՝ մասնակիին ու մասնիկին մէջ իսկ խտացուած բացալստելով ամբողջականին զգացողութիւնն ու ծաւալը:

Յաւի, տառապանքի եւ առանձնութեան այս «տիեզերք»ը ուրեմն, Արմէն Լիւպէնին բանաստեղծութիւններուն կորիզը կազմեց: Մանաւանդ առանձնութիւնը, անտարբերութիւնը կամ կեղծ գուլթը մարդոց, բնաւ տեղի չտուին մաղձի եւ ատելութեան, որովհետեւ բանաստեղծը իր պայծառատեսութեամբ հաստատեց թէ ինք չէ որ արժանի է գուլթի, այլ՝ նոյն այդ արտաքին աշխարհը, - «Աշխարհին մէջ առանձին չե'մ, այլ առանձին եմ աշխարհին հետ» եզրակացուց ան:

Արդարեւ, Լիւպէնի առանձնութիւնը բնակուած է բազում շնչաւոր եւ «անշունչ» կարծուած էակներով, իրերով եւ մանաւանդ շքեղ բնութեան ներգործող բոլոր

Շար.ը էջ 19

# ՍՍԱՅՈՒԱԾ ՎՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## «ՇՈՒՐՁԸ՝ ՈՉԻՆՉ» ԱՐՄԵՆ ԼԻՊԵՆ (ՇԱՐԱՆ ՇԱՐՆՈՒՐ)

Քալիֆորնիայի արձակագիր Սարգիս Վահագնի ֆրանսերէնէ հայերէն թարգմանութեամբ՝ Արմէն Լիւպէնի «Շուրջը Ոչինչ» ամբողջական քերթուածներու ներկայ պատկառելի հատորը լոյս ընծայուած է ՍԻՓԱՆ Հրատակչատունէն, Պէյրութ, Լիբանան:

Հատորը կը բաղկանայ երեք գլուխներէ՝ ճամբորդը Գաղտագողի, Սուրբ Համբերութիւն, Դարպասներ Բարձրագիր եւ Կրակ ընդ Կրակի՝ որոնց տակ ցուցակագրուած բանաստեղծութիւնները ընդհանրապէս գերարդիական աւելումով մարմին ստացող ներքին ցաւեր, յոգեք եւ հոգէ-մտաւոր պատկերացումներ, շօշափելի պատկերացումներ կը պատարեն գեղանկարիչի մը զմայլելի վրձինումներով:


Գեղանկարիչ Յարութիւն Թորոսեանի արուեստի կողքի նկարով եւ Կարպիս Լ. Նազարեան Հիմնադրամի 9-րդ մատենաշարով լոյս ընծայուած ներկայ 203 էջերէ բաղկացած այս գեղատիպ երկը, Սարգիս Վահագնի հայերէն թարգմանութիւնն է Փարիզ, «Կալիմար» հրատարակչատունէն վերջերս լոյս ընծայուած Արմէն Լիւպէնի (Շահան Շահնուրի) ամբողջական բանաստեղծութիւններուն, որոնք, ըստ թարգմանիչին հաստատումին,

### «ՍԱՐԳԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԸ» ՄՈՆԻԱ ՄԿՐԵԱՆ

Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի «Ժեոֆիզիքայի եւ Երկրաչափական Սեյսմոլոգիայ»-ի Ինստիտուտի Գիտաշխատող, 1979-էն ասդին Քալիֆորնիա հաստատուած բանաստեղծուհի Սոնիա Մկրեանի հինգերորդ հրատարակութիւնն է «Մարդը եւ Ժամանակը» ներկայ բանաստեղծութիւններու երկը:


Մարդը ու հեղինակուհիի նկարչական հեղինակութիւններով բարեզարդուած գիրքը, որ կը բաղկանայ 130 էջերէ, Գ. Քրիստինեանի յառաջաբանին կողքին, ունի Տոթթ. Գ. Խրլոպեանի եւ գրող Ն. Մելգոնեանի դրական վկայութիւնները:

«Մարդը եւ Ժամանակը» հարազատ, հեզասահ, անբռնագբօսիկ, այլ հմայիչ դրսեւորումն է Սոնիա Մկրեանի հոգեկան ու մտաւոր աշխարհին: Հոն կայ հայրենասիրական ուժեղ ոգի, սիրոյ անսպառ աղբիւր, յուսադրիչ հաւատք, մայրական անսպառ գուրգուրանք,



«լրիւ կը բացայայտէ բանաստեղծին դիմագիծը իր բոլոր լոյսերով եւ փայլով»:

«Ինչու՞ այս գիրքը», իր յառաջաբան խօսքին մէջ, Սարգիս Վահագն կը գտնէ թէ «աններելի սխալ մը եւ մեծ թերացում մը պիտի ըլլար տէր չկանգնիլ եւ մեր քերթողական անդաստանին չբերել բանաստեղծական այս կոթողական ժառանգը, որ հակառակ լեզուական պատուարին... իր ակունքները կը գտնէր հայկականին մէջ եւ կը մնար արդիական»:



նուիրում, եւ թելադրականութիւն: Այդ բոլորը՝ Սոնիա դարբնած է խորը ապրումով, պարզութեամբ եւ ջերմութեամբ:

# PIACCI UOMO

Men & Boys Suit Outlet

**GRAND OPENING**

Inglewood Crenshaw Plaza

**3 Suit Special**

for \$249<sup>99</sup> Reg. \$899<sup>99</sup>

\* with this ad only

- 3 • Tailored Suits
- 3 • Dress Shirts
- 3 • Silk Ties
- 3 • Silk Hankies
- 3 • Belts
- 3 • Pair of Socks

**Boy's Suit Package \$69<sup>99</sup>**

- 1 • Tailored Suit
- 1 • Dress Shirt
- 1 • Tie
- 1 • Hankie
- 1 • Belt
- 1 • Pair of Socks

**FREE Silk Tie Set**

with any purchase \* with this ad only

**20% - 70% OFF**

JUST IN TIME FOR EASTER

PIACCI UOMO

2646 W. IMPERIAL HWY

INGLEWOOD, CA 90303

(Next to M&M Soul Food)

323-755-3300

OPEN 10AM - 7PM MON - SAT • SUNDAY BY APPOINTMENT

CHIROPRACTIC - MASSAGE - REHAB - NUTRITION - WEIGHT LOSS

## CHIROPRACTIC HEALTH CENTER

**Eliminate Pain Naturally**

without drugs. without surgery

- Low back pain
- Sciatica
- Hip and knee pain
- Neck Pain
- Headaches
- Carpal Tunnel
- Arthritis
- Stress relief
- Rehabilitation
- Accidents and injuries
- Post-surgical

• We welcome most insurance plans

• We offer flexible payment options

**DR. TSOLAG KAZANDJIAN**

623 West Duarte Rd., Ste. 5, Arcadia, CA 91007

CALL TODAY: 626.821.9544

Call now! Same day appointments available.

*Armenian Athletic Association Ladies Auxiliary*

*proudly presents*

# *“Fan-tastic Fashion”*

*Ladies' & Gentlemen's  
Fashion Show Luncheon*

*Sunday, April 29, 2007 – Omni Hotel*

*251 South Olive Street, Los Angeles*

*10:30am Boutique / Social Hour • 12:30pm Luncheon / Fashion Show*



*Information & Reservations:*

*Garine 626-755-4773 gdepoyan@hotmail.com*

*Dzovig 626-429-8366 vdkoro@yahoo.com*

*Donation \$75.00*



### ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԳԱՂԱՓԱՐԻ ԸՆՏՔԵՐՈՎ

Շարունակուած էջ 13-էն

րացել էին, շատ մայրերի հանդիպեցի ոչ լացը յայտնի էր ոչ ալ ծիծաղը, հոգեկանները խանգարուել էին: Ես ինքս այդ բոլոր տեսարանները տեսնելով, օրեր շարունակ խելքի չէի գալիս, մինչեւ իրիկուան ժամերին աշխատեցինք եւ վերադարձանք Երեւան: Հարիւրներով վիրաւորներ բերուած էին Երեւանի հիւանդանոցները, հազարներով մեքենաներ Երեւանից տարբեր ուղղութեան մեկնում էին երկրաշարժի եղած տեղերը հետերին տանելով ուստեստեղէն եւ հաց:

25,000-ից աւելի մարդիկ գոհուեցին եւ մնացին հազարներով անտուն, անօթեւան, առանց լոյսի, Ղարաբաղեան Կոմիտէի նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանը եւ Աշոտ Մանուչարեանը աւելի ազդեցիկ ելոյթներ ունեցան Գորդոնի Տան Միութեան բակում, բաւականին մարդիկներ հաւաքուած էին, ուսուցանողները ներկայութեան Լեւոն Տէր Պետրոսեանի արտասանած ճառով, ժողովուրդը երկրաշարժի գոհուածների երեխաները տանում են Ռուսաստան, տէրութիւն ըրէք շտանելու համար: Յաջորդ օրը Ղարաբաղեան Կոմիտէի տղաների 8 հոգին բռնեցին տարին Մոսկուայի բանտը 6 ամիս բանտարկութեան ենթարկեցին: Միթինկները շարունակուած էին Մատենադարանի տարածքում, որովհետեւ ուսուցիչները լեցուած էին օփերայի հրապարակում, այդ դժուար օրերին աղոթականը փակուեց ազերիներից վտանգ չսպառնալու համար, ժողովուրդի 70 տոկոսը լոյսից զրկուեց, Ատրպէյճանը նիւթահեղուկ կազը կտրեց ձմեռուան ժամանակ, մարդիկ տունների մէջ սկսան սառիլ, ստիպուած սկսան ծառերը կտրել, երեխաները տաքանալու համար: Հայաստանի ժողովուրդը սկսաւ նեղ կացութեան մատնուել, կարեւորը Ղարաբաղի հզօրացնել յաղթանակ տանելու համար: Ոչ մէկը իրաւունք չուներ Ղարաբաղեան Կոմիտէին մեղադրելու, նաեւ անձամբ Լեւոն Տէր Պետրոսեանին, այդ ծանր կացութեան մէջ, Ղարաբաղեան Կոմիտէն ամէն կերպ աշխատում էր ժողովուրդին մեղմացնելու, բայց դժբախտաբար ամէն օրուայ համար դէպքերը պակաս չէին, թունաւորման պատճառով մի քանի երիտասարդ կիներ միթինկի ժամանակ եկան բարձրացան օփերայի բեմահարթակի վրայ եւ ամէն մէկը իր ելոյթում արցունքոտ աչքերով ելոյթ ունեցան, պատմեցին Տեքստիլ մանուածքի 3 գործարաններում պատահածների մասին, մանուածքի թելերը ստանում էն Ատրպէյճանից, սոպրակներու մէջ թելերը լեցնում են մէջը քիմիայի թունաւոր փոշին խառնելով ուղարկում են Երեւանի Տեքստիլ մանուածքի գործարաններ, աշխատողները բոլոր կանայք են, առանց իմանալու սոպրակը բացում են թունաւոր քիմիայի փոշին տարածուած ներսը եւ սկսում է սիրտ խառնոց, հետ տալ, գլխապտոյտ, շտապ օգնութեան մեքենան վերցնում է թունաւորուածներին տանում է հիւանդանոց, 6 ամիս է տեւում բուժման համար, ես սկսեալ տեսաւ աչքերով տեսայ Շահումեանի Տեքստիլ գործարանի աշխատողները դուրս էին հաւաքուած ներսից թունաւորուածներ-

րին հանում էին, նաեւ իմ բարեկամիս աղջիկն ալ թունաւորուած էր, բոլորը լեցրին մեքենաների մէջ եւ տարին հիւանդանոց: Սովետական կայսրութիւնը սկսաւ փլուզուել, կոմունիստները սկսան վարել եւ պատրել իրենց Լենինեան տոմսերը:

1989 Մարտ ամիսն էր, առաւօտեան գնացի օփերայի հրապարակ, հաւաքուել էին 300 հոգիից աւելի կոմերտականներ, սպասում էին իրենց հրամատարի հրամանին, առանց գիտակցութեան պիտի քալէին Բարեկամութեան փողոցով, որ շէնքի վրայ ցուցափեղկ է դրուած ուսական տառերով պէտք է ջարդեն եւ փշուեն ապակիները, մեծամասնութեամբ ձեռքերին բռնած մուրճ եւ երկաթէ երկար կտորներ, ես մօտիկացայ գլխաւոր հրաման տուողի մօտ՝ երիտասարդ մի տպագի, իրեն ըսի, այս շէնքերը ժամանակին մենք հայրենադարձներս կառուցել ենք, դուք ցուցափեղկը ջարդելու ժամանակ դրան անկիւնաքարը պիտի փշուի: Վերջէն շատ դժուար կը լինի սարքելը, Հայաստանը մեր տունն է, դուք Լենինեան գաղափարով դաստիարակուել, մի դի-

մէք սխալ քայլի, Լենին պապին ձեզ ըսել է շուտ մեծացէք պալիկներնոր աշխարհը կառուցէք ոչ թէ քանդեցէք, հրամատարին ինձ պատասխանեց դու մի խառնուիր մերգործերին, կոմերտական այլեւս գոյութիւն չունի բոլորը տոմսերին պատուել են ոչ ալ կոմսոմոլ, եւ սկսան քայլել: Մենք ալ առաւօտուն քիչ մարդ էր հաւաքուել իրենց հետեւից գնացինք տեսնելու ինչ են անելու, որ շէնքի վրայ ցուցափեղկ կար ուսներէն տառերով գրուած առանց խնայելու սկսան ջարդել անկիւնաքարերը, փշուում էին, իմ սիրտէն արիւն էր վազում, բայց ի վիճակի չէի գազանացած ամբոխին կանգնեցնելու: Ռաֆֆի անուան դպրոցում նոյնպէս կոմերտականները հրաժարուել են Լենինեան գաղափարից, Լեւոն Միթարեանին երկու երեխաները սովորում են նոյն դպրոցում, 500 աշակերտների ծնողները հաւաքուել էին սրահում, դպրոցի տնօրէն Անդրիասեանը յայտնում է, ծնողներ ինչ անուն պիտի դնենք, քանի որ կոմերտական կոմսոմոլ գոյութիւն չունի: Լեւոն Միթարեանը առաջարկում է սկսուտութիւն մէջտեղ բերենք, իմ հայրս Պէյրութի մէջ Հ.Մ.Մ.ի սկսուտ եղած է իր խմբա-

պետը այստեղ է շատ գիտելիքներով օժտուած, մեզ օգտակար կը լինի կազմակերպելու, յաջորդ շաբաթ բոլոր ծնողները նորից հաւաքուեցին, ինձ հրաւիրեցին ելոյթ ունենալու, ինչ է սկսուտութիւնը եւ որտեղից ծագում է արել, եւ բոլոր ծնողները համաձայնեցին, սկսանք կազմակերպել Ռաֆֆի անուան դպրոցից, 300 հոգի արձանագրուեցին եւ կարճ ժամանակում հազուեցին սկսուտական հազուստները, 6 ամիս անձ բոլորը իրենց երդումը տուեցին, մենք Հայկազունի սկսուտներս պատուով վրայ կը խոստանանք լինել հաւատարիմ Աստուծոյ, ներկայ էին շատ դպրոցից տնօրէններ, արտասահմանից հիւրեր եկել էին տեսնելու առաջին անգամ Երեւանի մէջ գոյութիւն առած սկսուտութիւնը: Ներկայ էր նաեւ Ֆետաի Սմբատը, սկսուտների ծնողները: Վերջում Գարեգին սրբազանը իր օրհնանքը տուեց սկսուտներին որ մեծանան եւ դառնան Հայրենիքի համար հերոս գինուորներ եւ սկսան բոլոր դպրոցների մէջ կազմակերպել սկսուտական խումբեր:

(Շարունակելիք 2)

**FREE ADMISSION** **Z.U.U. 19 21** **ALL AGES WELCOME**

**ARMENIAN SPORTS & SCOUTS FAIR**

**Come sign up for sports or scouts**

**WHEN?** April 15, 2007  
**TIME?** 12pm-4pm  
**WHERE?** Armenian Athletic Association  
**HOMENMEN Club**  
 1060 N. Allen Ave  
 Pasadena, CA 91104

**Join us for a fun-filled day of GAMES, PRIZES, ACTIVITES and FREE FOOD !**

**ՄԱՐՁԱԿԱՆ**

**ՖՈՒԹՊՈՒԼ**

**ԼԵՎԱՍԱՆ - ՐԱՅԱՍԱՆ 1-0**

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հաւաքականը Լեհաստանի Կիելցե քաղաքում 0-1 հաշիւով պարտուեց Լեհաստանի հաւաքականին: «Եւրո-2008»-ի ընտրական փուլի այս մրցավեճի միակ կողմը 26-րդ րոպէին խփեց Լեհաստանի հաւաքականի աւագ ժուրավսկին: Այս պարտութիւնից յետոյ Հայաստանը 1 միաւորով եզրափակում է ընտրական առաջին խմբի մրցաշարային աղիւսակը:



Յիշենք որ Շաբաթ օրը Լեհաստանի հաւաքականը մրցելով Ատրպէյճանի դէմ խաղը շահել էր 5-0 արդիւնքով: Հայաստանի ազգային հաւաքականը իր յաջորդ հանդիպումը կը կատարէ Ղազախստանի հետ Յունիս 2-ին:



**ԲԱԽՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ**

Ուրախութեամբ կ'իմանանք թէ Տէր եւ Տիկ. Փիէռ եւ Նաթալի Քէօրոլլեաններ բախտաւորուած են առջինեկ մանչ գաւակով մը եւ զայն անուանած Սթիվըն-Վարդան:

Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու երջանիկ ապագայի սրտաբուխ բարեմաղթութիւնները նորածինին, անոր ծնողքին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: Յատկապէս մեծ հայրն ու մայրը՝ Տէր եւ Տիկ. Ընկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրոլլեաններուն:

**ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ**

Տէր եւ Տիկ. Փիէռ եւ Նաթալի Քէօրոլլեանի առջինեկ մանչ գաւակով մը բախտաւորուելուն առիթով Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը կը շնորհաւորէ բախտաւոր ծնողքը, իրենց հարազատները, մասնաւորաբար՝ Միւթեանս ատենապետ՝ նորածինին մեծ հօր եւ մօր՝ Տէր եւ Տիկին Վարդան Քէօրոլլեանին:

**ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆ**

Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմինը իր ջերմ շնորհաւորութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկ. Փիէռ Քէօրոլլեանին, մանչ գաւակով մը բախտաւորուելուն առիթով, մասնաւորաբար նորածինին մեծ հօր եւ մօր, վարչութեանս անդամ Ընկերուհի Ծովիկ Քէօրոլլեանին: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

**ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ**

Տէր եւ Տիկ. Փիէռ եւ Նաթալի Քէօրոլլեաններու մանչ գաւակով բախտաւորուելուն առիթով Տէր եւ Տիկ. Գէորգ Թաւուքճեան կը շնորհաւորեն բախտաւոր ծնողքն ու յատկապէս մեծ հայրն ու մայրը Տէր եւ Տիկ. Վարդան Քէօրոլլեանը եւ առ այդ \$100 տոլար կը նուիրեն Հ.Մ.Մ.ին:

**HARUT DER-TAVITIAN**  
License #0B28270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202  
Glendale, CA 91201

**Tel.: 818/502-3233**  
**Fax: 818/502-3244**  
**Pgr.: 818/608-9898**  
**info@excelhye.com**  
**www.excelhye.com**

**EXCEL**

**HYE INSURANCE SERVICES**

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

**ՄԱՍԻՍ**

**ԱՄԵՆԱՎՍԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

**ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ**  
**ԵՒՐՈ – 2008 ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ**

<p><b>Ա. ԽՄԲԱԿ</b> Մարտ 24</p> <p>Փորթուկալ - Պելճիքա 4-0 Ղազախստան - Սերպիա 2-1 Լեհաստան - Ատրպէյճան 5-0</p>	<p>Մարտ 28</p> <p>Ատրպէյճան - Ֆինլանտա 1-0 Սերպիա - Փորթուկալ 1-1 Լեհաստան - Յայաստան 1-0</p>
---	---

<p><b>Ա. Խմբակի դասաւորումը</b></p> <p>Լեհաստան 7 5 1 1 12-5 16 Փորթուկալ 6 3 2 1 13-3 11 Ֆինլանտա 6 3 2 1 7-3 11 Սերպիա 6 3 2 1 8-4 11</p>	<p>Պելճիքա 6 2 1 3 4-6 7 Ղազախստան 6 1 2 3 3-8 5 Ատրպէյճան 6 1 1 4 2-13 4 Յայաստան 5 0 1 4 0-6 1</p>
---	--

<p><b>Բ. ԽՄԲԱԿ</b> Մարտ 24</p> <p>Սկովտիա - Վրաստան 2-1 Ֆարո Կղզիներ - Ուքրաինա 0-2 Լիթւանիա - Ֆրանսա 0-1</p>	<p>Մարտ 28</p> <p>Ուքրաինա - Լիթւանիա 1-0 Վրաստան - Ֆարո Կղզիներ 3-1 Իտալիա - Սկովտիա 2-0</p>
---	---

<p><b>Բ. Խմբակի դասաւորումը</b></p> <p>Ֆրանսա 5 4 0 1 12-2 12 Սկովտիա 6 4 0 2 11-6 12 Ուքրաինա 5 4 0 1 8-4 12 Իտալիա 5 3 1 1 9-5 10</p>	<p>Վրաստան 6 2 0 4 13-12 6 Լիթւանիա 5 1 1 3 3-5 4 Ֆարո Կղզիներ 6 0 0 6 1-23 0</p>
---	---

<p><b>Գ. ԽՄԲԱԿ</b> Մարտ 24</p> <p>Մոլտաւիա - Մալթա 1-1 Նորվեկիա - Պոսնիա 1-2 Յունաստան - Թուրքիա 1-4</p>	<p>Մարտ 28</p> <p>Յունգարիա - Մոլտաւիա 2-0 Մալթա - Յունաստան 0-1 Թուրքիա - Նորվեկիա 2-2</p>
--	---

<p><b>Գ. Խմբակի դասաւորումը</b></p> <p>Թուրքիա 5 4 1 0 14-3 13 Յունաստան 5 4 0 1 8-4 12 Նորվեկիա 5 2 1 2 9-6 7 Պոսնիա 5 2 1 2 10-12 7</p>	<p>Մալթա 5 1 1 3 5-10 4 Յունգարիա 4 1 0 3 5-8 3 Մոլտաւիա 6 0 2 4 3-13 2</p>
---	---

<p><b>Դ. ԽՄԲԱԿ</b> Մարտ 24</p> <p>Իրլանտա - Կալէս 1-0 Կիպրոս - Սլովակիա 1-3 Չեխիա - Գերմանիա 1-2</p>	<p>Մարտ 28</p> <p>Չեխիա - Կիպրոս 1-0 Իրլանտա - Սլովակիա 1-0 Կալէս - Սան Մարինօ 3-0</p>
--	--

<p><b>Դ. Խմբակի դասաւորումը</b></p> <p>Գերմանիա 5 4 10 0 21-3 13 Չեխիա 6 4 1 1 15-4 13 Իրլանտա 7 4 1 2 12-8 13 Սլովակիա 6 3 0 3 15-11 9</p>	<p>Կալէս 5 2 0 3 8-9 6 Կիպրոս 6 1 1 4 9-16 4 Սան Մարինօ 5 0 0 5 1-30 0</p>
---	--

<p><b>Ե. ԽՄԲԱԿ</b> Մարտ 24</p> <p>Խրովադիա - Մաքետոնիա 2-1 Եսթոնիա - Ռուսաստան 0-2 Իսրայէլ - Անգլիա 0-0</p>	<p>Մարտ 28</p> <p>Իսրայէլ - Եսթոնիա 4-0 Անտորրա - Անգլիա 3-0</p>
---	--

<p><b>Ե. Խմբակի դասաւորումը</b></p> <p>Խրովադիա 5 4 1 0 15-4 13 Անգլիա 6 3 2 1 9-2 11 Իսրայէլ 6 3 2 1 13-6 11 Ռուսաստան 5 3 2 0 7-1 11</p>	<p>Մաքետոնիա 6 2 1 3 5-5 7 Եսթոնիա 5 0 0 5 0-10 0 Անտորրա 5 0 0 5 1-22 0</p>
--	--

<p><b>Զ. ԽՄԲԱԿ</b> Մարտ 24</p> <p>Լիխթենշթայն - Յիւ. Իրլանտա 1-4 Սպանիա - Տանիմարք 2-1</p>	<p>Մարտ 28</p> <p>Լիխթենշթայն - Լաթւիա 1-0 Սպանիա - Իսլանտա 1-0 Յիւ. Իրլանտա - Շուէտ 2-1</p>
--	--

<p><b>Զ. Խմբակի դասաւորումը</b></p> <p>Յիւ. Իրլանտա 6 4 1 1 10-7 13 Շուէտ 5 4 0 1 9-4 12 Սպանիա 5 3 0 2 9-6 9 Տանիմարք 4 2 1 1 7-2 7</p>	<p>Լաթւիա 4 1 0 3 4-3 3 Իսլանտա 5 1 0 4 4-9 3 Լիխթենշթայն 5 1 0 4 3-15 3</p>
--	--

<p><b>Է. ԽՄԲԱԿ</b> Մարտ 24</p> <p>Լիքսամպուրկ - Պելուռուսիա 1-2 Ալպանիա - Սլովակիա 0-0 Յոլանտա - Ռումանիա 0-0</p>	<p>Մարտ 28</p> <p>Պուլկարիա - Ալպանիա 0-0 Ռումանիա - Լիքսամպուրկ 3-0 Սլովակիա - Յոլանտա 0-1</p>
---	---

<p><b>Է. Խմբակի դասաւորումը</b></p> <p>Յոլանտա 6 4 2 0 8-2 14 Ռումանիա 5 3 2 0 10-3 11 Պուլկարիա 5 2 3 0 7-3 9 Պելուռուսիա 5 2 1 2 9-11 7</p>	<p>Ալպանիա 5 1 1 3 4-8 4 Ալպանիա 5 0 3 2 3-6 3 Լիքսամպուրկ 5 0 0 5 1-9 0</p>
---	--

### ՅԱԻԱԿՅՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳ ՍԱՄՈՒԷԼՆԻ մահուան առթիւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը եւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի գաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

### ՅԱԻԱԿՅՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳ ԱԼԱՃԱՃԵԱՆԻ մահուան առթիւ կը յայտնենք մեր ցաւակցութիւնները հանգուցեալի Տիկնոջ, գաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

«Մասիս»

### ՅԱԻԱԿՅՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՓՐԵՄԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեաններ կը յայտնեն իրենց խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի Տիկնոջ եւ գաւակներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Սիլվա Եփրեմեաններուն:

Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

### ՅԱԻԱԿՅՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՓՐԵՄԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ Տէր եւ Տիկ. Սարգիս Տէվէճեան կը յայտնեն իրենց ցաւակցութիւնները հանգուցեալի Տիկնոջ եւ գաւակներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Սիլվա Եփրեմեաններուն:

Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year) \* \$50,00 for USA \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada. \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

## Palm Springs

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ԶԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ԳՆՁԱՐԱՆ, մեծ ԳՍՏԱՍԵՆԵԱԿ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուղի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիթքիթի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450



Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Չեր Ճանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 Email: massis2@earthlink.net

## ԱՐՄԵՆ ԼԻՒՊԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Շարունակուած էջ 15-էն

տարրերով, որոնք քերթողին սեւեւուածին տակ կը կենդանանան, կ'եւան կեանքով եւ անգուպ երանգներով: Եռուզեռ կայ այդ առանձնութեան մէջ, զգացումներու, յոյզերու յորձանք եւ մտածումներու փեթակ: Ծառերը, հովն ու ծովը, ճեմուղին ու աւազակոյտերը, երկիքն ու արեւը, անձրեւն ու փոթորիկը, այսպէս, ապրող գրուցակիրներ են Լիւպինին համար, որոնց հետ միշտ վէճի կամ խորհրդակցութեան մէջ է ինք, երբեմն ալ զմայլանքի, սրտակցութեան եւ մտերմութեան: Նոյնիսկ պատճառ, կախարդանքի, ինչպէս «պատուհան մը՝ որ շուրջը ոչինչ ունի», եւ որ սակայն «կը բացուի արտեւանունքներու պէս», եւ կը տանի զինք «բարձունքներուն», ապա կը բացուի իրեն, հոգ չէ թէ «շուրջը ոչինչ»: Տակաւին, առ ի չգոյճ ուրիշ գրուցակիրի, կարելի կ'ըլլայ գրոյցի նստիլ, եւ կատակել նոյնիսկ, օրինակ, ամպին հետ.

«Ապաքինեալները պարտէզին մէջ հաւաքուած, խոնարհաբար կը հայցեն ամպէն մեծահոգ, Ուղղել դիրքն իր...»  
«Երկինքը փրթուած մը հաւատքով պայծառանայ, եւ խոստանայ պատառ մը իր կապոյտ պարեգօտէն»: Եւ թեւածէ յոյսը.-  
«Իւրաքանչիւր բանտարկեալ, իր պատուհանէն, կախարդանքովը քանի մը բառերու կը փախչի, նայեցէք, կ'ազատի, Որովհետեւ իր բանալին ժիր շարժիչ մըն է, կը մնայ միայն երկինքն ալ համոզել...»

Իսկ երկինքը «համոզել» այնքան ալ հեշտ չէ: Լիւպին թէեւ համակերպած իր վիճակին, յուսահատ ճակատագրապաշտ մը չէ: Ճիշդ է, չի վարարի երջանկութեամբ, ալ, բայց խորունկ է կեանքի սէրը, որ այլակերպումով, հոս «ակնթարթ լոյս»ին պատկերով սեւեռուած՝ «ճշմարիտ աշխարհ վիճի գովութեան եւ յոյզի, որպէս լոյս ակնթարթ՝ կ'ենթադրէ ինքնամոռացում», «եւ մեկնում, եւ վերադարձ քարտէս»:

«Նոյն այն ինքը զոր չէ կորսնցուցած կը վերագտնեն, հո՛ս, նոր աշխարհի մը մէջ  
Քալող առասպելներու հետ, որոնք ձգտում ունին, Բոլոր անոնց հետ՝ որոնք կը համասփռեն լոյսն-ակնթարթ, Սէր՝ որ կ'ազատագրէ, կամ՝ վախ յոռեգոյնի»:

Այս յարափոփոխ հոգեվիճակները պատկերաւոր թուիչքներով կենսաւորուած են: Հոն կայ թախիծը կորսուած առողջութեան եւ աւաղումը կեանքը լիաբուռն չկարենալ ապրելուն: Կայ առանձնութեան ջլատիչ ծանրութիւնը դեռ՝ մտալիկութիւն ու ժգնութեամբ:

Կեանքի եւ մահուան, ցաւի եւ տառապանքի լիւպինեան երգերը ունին նաեւ ուրիշ առանձնայատկութիւն մ'ալ. անոնք բնաւ չեն ձգտիր փիլիսոփայելու, իմաստափրելու կեանքի երեւոյթներն եւ վերիվայրումները, հասարակ տեղիք դարձած ունայնութեան եւ ճակրատապաշտ ելքերու մանուածապատ լուծումներով: Լիւպինի մօտեցումը զարմանալիօրէն կը մնայ

առարկայական՝ սերտօրէն առնչուած կեանքին, առօրեային եւ սովորական իր շրջապատին հետ: Ամէն պատկեր այդ շրջապատին կը բղխի եւ անոր շօշափելի կառուցը ունի, պարզ եւ սովորական երեւոյթով: Այսպէս՝ գաղթական հայերուն պանդոկ կացարանը «եփած ամբուկ կը բուրէ», ուր «լուծութիւնը կանգնած է ինչպէս իսլամական գերեզմանաքար», ուր արեւն իսկ կ'որակուի «ճշգրիտ» եւ ծառերը կը դառնան «գեղեցիկ վկաներ»: Այսպէս, Լիւպինի քերթուածները մեզի կը փոխանցեն ամէն բանէ առաջ ֆիզիքական, ճշգրիտ եւ միշտ շօշափելի տեսողականութիւն մը, եթէ նոյնիսկ անոնք կը միտին մեզի հաղորդելու վերացական մտածում մը կամ զգացում մը: Օրինակ՝ մահուան ողբերգական ուժը իր մօտ կը դրսեւորուի փայտի սա կարծր նիւթականացած պատկերով.-

«... Ժամը վերջին կը դանդաղի եւ կը մարի ընդոտտ, կառքերը բոլոր կ'անշարժանան

Ամուլ տիրութեան փողոցներուն մէջ»:

Նոյնիսկ յոյսի, լոյսի եւ վերացումի վերացական զգացողութիւնը կ'արտաբերուի «Ֆոնֆորաշող ուղի»ի պատկերով, զոր սպասման հատնումը «սալարկի կը վերածէ»: Իսկ, յուսահատ, փշրուած ներաշխարհով մարդը ինչ է, եթէ ոչ՝ «զրպանները դուրս դարձուած, ներսը՝ դուրս» միայն: Այս բոլորը՝ առանց փնտրուած պնդազարդումի, բնական ու պարզ ձեւով, շեշտակի «շուրջը՝ ոչինչ» բայց ճշգրիտ ու արագ՝ արձակուած հրազենի փամփուշտին պէս դիպուկ եւ ցնցող: Եւ նաեւ անսպասելի չսպասուած անկիւնէ մը, չ'ակնկալուած մէկ պահի մը ընթացքին պայթած: Ինքնանպատակ չեն անոնք, այլ քերթուածին կառուցն ու կըռոյթն են միանգամայն, ըսելու գուցէ ինքնանցման լաւագոյն ձայնատարն ու սպասարկուն:

«Բառերը ոչինչ են, անոնք կը քալեն առջեւէն,

Բայց անտառ մը կը հետեւի անոնց»:

Այդ «ոչինչ» բառերով, Շահնուր մեր հայեցողութեան առջեւ կը բանայ աշխարհ-անտառ մը, ուր կեանքն ու մտածումը, յոյզն ու զգացումը, վիշտի ու ցաւի արհաւիրքներով ետուն՝ կ'առնեն մեզ իրենց փոթորկայոյց յորձանքին մէջ, կը տանին թաւալքով, հասցնելու սակայն, խոկումի եւ ապրումի պայծառ փոփոխներուն:

«Կախարդանի փայտերը չձաղկեցան բնաւ,

Բայց ծաղկած ծառերը վերածուեցան կախարդանի»:

Երկու այս տողերուն մէջ արդի նիւթապաշտ եւ նեղ աշխարհն է իստացուած իր ահաւոր հակասութիւններով եւ անմարդկային լրբութեամբ՝ ցնցիչ եւ զգաստացնող: Եւ նաեւ ապացուցանող՝ թէ Արմէն Լիւպինն ալ մեծ գեղապաշտի կողքին է նաեւ կոշուծի տէր, տեսանող, քաղաքացի մեծ բանաստեղծ մը եւ աշխարհը իր հոգիին մէջ ընդգրկող մեծ մարդ մը՝ համաշխարհային չափանիշով:

Հայերէնի այս թարգմանութեամբ, ան կը մտնէ քերթողական մեր հարազատ եւ հարուստ պարտէզէն ներս, դափնեպսակը՝ արդէն լուսաւոր ճակատին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:  
Proud Past, Exciting Future.



Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School



THE QUALITY AND SAFE ALTERNATIVE  
FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION

# HIGH SCHOOL OPEN HOUSE

2007-2008 ACADEMIC YEAR

Grades 9 - 12

**WEDNESDAY,  
MARCH 28, 2007  
AT 6:30 PM**

Parents interested in enrolling their high school student are invited to join us to learn about our academic programs and educational opportunities available in an Armenian environment.

You will have a chance to meet with the faculty and administration, tour the campus, pick up an application, and speak with admissions officers.

**AGBU HIGH SCHOOL - PASADENA**  
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104  
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

For more information,  
please contact the school office at 626-794-0363.



Հ.Բ.Ը.Մ.  
ԱՐՄՏԱԽԱԶՊ  
ԹԱՏԵՐԱՆՈՒՄԲԸ

Կը ներկայացնէ

# Արդարաւած Էրանակ Ար

Կարակերգութիւն 2 արարով

Հեղինակ՝ ԻՈՆ ԳԱՐԱԾԻԱԼԷ  
Բեմադրիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

Շարաք, Մարտ 31 ժամը 8:00-ին

Կիրակի, Ապրիլ 1, Օրէնճ Գառնթի ժամը 5:00-ին  
Tel. 714-898-9053 Tel. 949-786-0746

ՍՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ \$20

Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան Կեդրոնի - Արտաւազը Թատերասրահ  
2495 E. Mountain Street, Pasadena

Տոմսերը կարելի է սրանալ

- Հ.Բ.Ը.Մ. Գրասենեակ 626-794-7942
- Ապրիլ Գրատուն 818-243-4112 • Պերճ Գրատուն 818-244-3830
- Հ.Բ.Ը.Մ. Մանուկեան-Տեմիրճեան Վարժարան 818-883-2428

## AGBU GLENDALE PASADENA CHAPTER Y O G A Y O G A Y O G A Y O G A

Come join us in a fun class guaranteed  
to challenge your mind and body!

Mariette is a certified hatha flow yoga instructor  
and a registered nurse who teaches yoga in the  
community and to healthcare professionals.

Yoga is a holistic practice which utilizes your body's own energy  
powerhouse to optimize wellness in the body and mind.

Yoga is neither a religion nor simply a "workout".

Classes starting March 26, 2007

LIMITED SPACES

For Information of reservations please call A.G.B.U. office (626) 794-7942



AGBU Asbeds

Cordially invite you to

*An Evening with Scholars*



**PROFESSOR VAHAKN DADRIAN**

*"Historical Answers to Turkish Denials"*

and

**PROFESSOR TANER AKCAM**

*"Turko-Armenian Relations After Hrant Dink"*

FRIDAY, APRIL 20th, 2007 – 8:00 PM

AGBU Manoogian-Demirdjian School

Aghajanian Hall

6844 Oakdale Ave., Canoga Park, CA

*Reception will follow*

**FREE ADMISSION**

For more information please call (626)794-7942

### AGBU CENTENNIAL SPONSOR



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com



**CROWNE PLAZA**  
HOTELS & RESORTS